Ֆ.Մ. ԴՈՍՏՈԵՎՍԿԻ

ՍՊԻՏԱԿ ԳԻՇԵՐՆԵՐ

1915.info

Թարգմանությունը՝
Ալ.Մերկանդարովի

DARAK
հրատարակչություն

ՍՊԻՏԱԿ ԳԻՇԵՐՆԵՐ

Սենտիմենտալ վեպ

(Երազողի հիշատակարանից)

Թարգմանությունը՝ Շիրվանզադեի

DARAK
հրատարակչություն

ՀՏԴ 821.161.1-31 Դոստոևսկի
ԳՄԴ 84(2)-44
Դ 798

Թարգմանությունը՝ Շիրվանզադեի

Դոստոևսկի Ֆյոդոր
Դ 798 Սպիտակ գիշերներ /Ֆ. Մ. Դոստոևսկի.- Եր.: Դարակ, 2024.- 88 էջ:

Պատմվածքի գլխավոր հերոսը երազող մարդն է՝ միայնակ և երկչոտ: Նա պատահաբար ծանոթանում է մի աղջկա՝ Նաստենկայի հետ և սիրահարվում նրան: Նրանց մեջ ծնվում է հետաքրքիր մտերմություն: Նաստենկան որոշում է պատասխանել երազողի զգացմունքներին, սակայն անսպասելիորեն հանդիպելով իր սիրեցյալին, Նաստյան փախչում է երազողից և նամակով ներողություն խնդրում դավաճանության համար: Գլխավոր հերոսը ներում է նրան և շարունակում սիրել:

թվագրել է 1915.ին Ֆ.Ս.

ՀՏԴ 821.161.1-31 Դոստոևսկի
ԳՄԴ 84(2)-44

ISBN 978-9939-885-57-5

© «Դարակ» հրատարակչություն, 2024

ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ

Զմայլելի գիշեր էր, այնպիսի գիշեր, որպիսին լինում է գուցե միայն այն ժամանակ, սիրելի՛ ընթերցող, երբ մենք երիտասարդ ենք։ Երկինքն այնպես աստղազարդ էր, պայծառ էր այնպես, որ, նայելով նրան, հարկավոր էր ակամա հարցնել՝ մի՞թե մի այդպիսի երկնքի տակ կարող են ապրել զանազան ցասկոտ ու քմահաճ մարդիկ։ Այս էլ մի նոր, դեռահաս հարց է, սիրելի՛ ընթերցող, շատ դեռահաս, սակայն թող նա Աստծու հրամանով շատ հաճախ այցելի քո սիրտը։ Խոսելով քմահաճ և զանազան ցասկոտ պարոնների մասին, ես չէի կարող չհիշել և իմ բարեբարո վարմունքն այդ ամբողջ օրը։ Դեռ առավոտից ինձ սկսեց տանջել մի ինչ-որ զարմանալի անձկություն, հանկարծ թվաց, որ ինձ՝ մենակիս, ամենքը ձգում են ու ամենքը հեռանում են ինձնից։ Շարկավ, յուրաքանչյուրն ունի իրավունք հարցնելու՝ ովքե՞ր են այդ ամենքը, որովհետև ահա ութ տարի է՝ ես ապրում եմ Պետերբուրգում և գրեթե ոչ

մի ծանոթություն չեմ կարողացել ձեռք բերել: Բայց ինչի՞ս են հարկավոր ծանոթությունները: Առանց այդ էլ ամբողջ Պետերբուրգն ինձ ծանոթ է, ահա ինչու ինձ թվաց, թե ամենքն ինձ ձգում, հեռացնում են, երբ ամբողջ Պետերբուրգը հանկարծ ոտքի ելավ, գնաց ամառանոց:

Մենակ մնալն ինձ համար դարձավ սոսկալի: Ամբողջ երեք օր դեգերում էի քաղաքում խորին թախիծի մեջ, միանգամայն չհասկանալով, թե ինչ է պատահում ինձ: Նևսկի պրոսպեկտն էի գնում, թե պարտեզ, թե թափառում էի առափնյա փողոցում, ոչ մի տեղ չէի տեսնում ոչ մեկին այն մարդկանցից, որոնց սովոր էի տեսնել միևնույն տեղում որոշյալ ժամերին, ամբողջ տարին: Իհարկե, նրանք ինձ չեն ճանաչում, բայց ես ճանաչում եմ նրանց: Ես շատ լավ եմ ճանաչում նրանց, ես գրեթե ուսումնասիրել եմ նրանց դեմքերը և հիանում եմ նրանցով, երբ ուրախ են, ու տխրում եմ, երբ մռայլված են: Ես գրեթե բարեկամություն եմ հաստատել մի ծերունու հետ, որին հանդիպում եմ ամեն օր որոշ ժամին Ֆոնտանկայի վրա: Նրա դեմքը հանդիսավոր է, մտախոհ. շարունակ իր քթի տակ շշնջում է ինչ-որ և ձախ ձեռքը թոթափում, ունենալով աջ ձեռում մի ճյուղավոր երկայն ձեռնափայտ ոսկե կոթով: Նույնիսկ նա նկատել է ինձ ու կարեկից է դեպի ինձ: Եթե պատահի մի օր, երբ ես որոշյալ ժամին Ֆոնտանկայի որոշյալ տեղում չլինեմ, հավատացած եմ, որ նա կտխրի: Ահա ինչի մենք երբեմն քիչ է մնում իրար բարևենք, մանավանդ երբ երկուսս էլ հոգեկան լավ տրամադրության մեջ ենք: Նորերս, երբ մենք ամբողջ երկու օր չէինք տեսել իրար, և երրորդ օրը հանդիպեցինք, արդեն ուզում էինք մեր գլխարկը բարձրացնել, երբ բարեբախտաբար ժամանակին ուշքի

եկանք, ձեռներս իջեցրինք ու կարեկցաբար անցանք միմյանց մոտով։

Տներն էլ են ինձ ծանոթ։ Փողոցով անցնելիս, յուրաքանչյուրը նրանցից առաջ է վազում, նայում է ինձ իր բոլոր լուսամուտներով և քիչ է մնում ասի. «Բարև, ինչպե՞ս է ձեր առողջությունը։ Ինքս, փառք Աստծու, առողջ եմ և մայիս ամսին ինձ վրա մի էտաժ էլ կավելացնեն», կամ՝ «ինչպե՞ս է ձեր առողջությունը, իսկ ինձ վաղը պիտի նորոգեն», կամ՝ «քիչ էր մնում, որ այրվեի, և շատ վախեցա» և այլն, և այլն... Նրանցից մի քանիսն իմ սիրելիներն են, կան և մերձավոր բարեկամներ։ Մեկը նրանցից մտադիր է այս ամառ ճարտարապետի մոտ բժշկվել։ Դիտմամբ ամեն օր նրան այցելելու եմ, որպեսզի մի գուցե, տերը մի՛ արասցե, վատթարեն նրա առողջությունը։ Ես երբեք չեմ մոռանա մի շատ գեղեցիկ բաց վարդագույն տան պատմությունը։ Դա քարաշեն մի տնակ էր, այնքան փոքրիկ և այնքան բարեհամբույր էր նայում ինձ և այնքան հպարտ էր նայում իր տձև հարևաններին, որ սիրտս ուրախանում էր, երբ անցնում էի նրա մոտով։ Անցյալ շաբաթ անցնում եմ փողոցով և հանկարծ լսում եմ մի սրտաշարժ ճիչ. «Ինձ ներկում են դեղին գույնով»։ Չարագործնե՛ր։ Բարբարոսնե՛ր։ Նրանք ոչինչ չխնայեցին, ոչ սյուները, ոչ քիվերը, և իմ բարեկամը դեղնեց ինչպես դեղձանիկ։ Այս առիթով քիչ մնաց, որ մաղձս եռար, և ես մինչև այսօր էլ ուժ չունեմ տեսնելու իմ այլանդակված խղճուկին, որին ներկել են Չինաստանի պետական գույնով։

Այսպես, ուրեմն, ընթերցո՛ղ, դուք այժմ գիտեք, թե ես ինչպես եմ ծանոթ Պետերբուրգի հետ։

Ես արդեն ասացի, որ ամբողջ երեք օր ինձ տանջում

էր մի անհանգստություն, մինչև որ գուշակեցի նրա պատճառը: Փողոցներում ևս վատս գալիս էր՝ սա չկա, նա չկա, ո՞ւր կորավ այսինչը, իսկ տանը, ինչպես ասում են, ինքս իմը չէի: Ամբողջ երկու երեկո ձգտում էի գիտենալ՝ ի՞նչ է պակասում ինձ: Ինչո՞ւ տանը նստելն ինձ համար այդքան տաղտկալի է: Եվ տարակուսանքով նայում էի մխոտված, կանաչագույն պատերին, Մատրյոնայի հաջող ջանքերով սարդի ոստայնով վարագուրված առաստաղին, դիտում էի ամեն մի աթոռ, մտածելով, արդյոք չարիքը այդտե՞ղ է թաքնված (որովհետև երբ մի աթոռ իր երեկվա տեղում չէ, էլ ես իմ գլխի տերը չեմ), նայում էի լուսամուտին՝ բոլորը զուր, ոչ մի թեթևություն: Ես նույնիսկ կանչեցի Մատրյոնային, հայրաբար հանդիմանեցի սարդի ոստայնի առթիվ և առհասարակ նրա անփութության վերաբերմամբ, բայց նա միայն նայեց ինձ զարմացած ու հեռացավ, առանց իմ հարցերին պատասխանելու, այնպես որ սարդի ոստայնը մինչև այսօր էլ հանգիստ կախված է իր տեղում: Վերջապես, այսօր առավոտ միայն գուշակեցի, թե բանն ինչումն է: Էհե՛, չէ՞ որ նրանք ինձնից են ամառանոց փախչում: Ներեցեք իմ այս տափակ բառը, տրամադիր չեմ բարձր ոճ գործածելու, որովհետև չէ՞ որ ինչ-որ կար-չկար Պետերբուրգում, կա՛մ տեղափոխվել էր, կա՛մ տեղափոխվում էր ամառանոց, որովհետև յուրաքանչյուր ծանրաբարո արտաքինով մի պատվավոր պարոն, որ կառք էր վարձում, իսկույն ևեթ իմ աչքում դառնում էր ընտանիքի պատկառելի հայր, որ իր սովորական պաշտոնական զբաղմունքներից հետո ուղևորվում է իր ընտանիքի գիրկը, ամառանոց, որովհետև յուրաքանչյուր մի անցորդ այժմ ուներ միանգամայն ուրիշ մի տեսք, որը քիչ էր մնում՝ ամեն մի

անցորդի ասի. «Մենք, պարոննե՛ր, միայն անցողակի ենք այստեղ, ահա երկու ժամից հետո կգնանք ամառանոց»։ Հենց որ մի լուսամուտ էր բացվում, որի ապակուն թմբկահարել էին նուրբ և շաքարի նման ճերմակ մատիկներ, հենց որ դուրս էր ցցվում մի սիրուն աղջկա գլխիկ, և աղջիկը կանչում էր անցնող ծաղկավաճառին, ես իսկույն և եթ երևակայում էի, որ ծաղիկները գնվում են հենց այնպես, այսինքն՝ ոչ թե նրա համար, որ գնողը նրանցով զվարճանա քաղաքային տոթալի բնակարանում, այլ թե՝ ահա շուտով պիտի գնալ ամառանոց և ծաղիկներն էլ պիտի տանեն իրենց հետ։ Այդ քիչ է. ես իմ յուրատեսակ գյուտարարության ասպարեզում այնպիսի հաջողություններ ունեի, որ արդեն կարող էի անսխալ, միայն արտաքինից դատելով, ասել, թե ով ո՛ր ամառանոցում է ապրում։ Կամենի և Ապտեկարսկի կղզիների կամ Պետերգոֆի ճանապարհի բնակիչները մյուսներից տարբերվում էին իրենց կեցվածքի ու ձևերի նրբությամբ, ամառային պճնավոր զգեստներով և շքեղ կառքերով, որոնցով քաղաք էին գալիս։ Պառդոլովայի բնակիչներն այնտեղ, հեռվում էլ, առաջին իսկ հայացքից «ազդում էին» իրենց ողջամտությամբ և լրջությամբ։ Կրեստովսկի կղզու հաճախորդը տարբերվում էր իր անվրդով-զվարթ արտաքինով։ Երբ տեսնում էի կահ- կարասու, զանազան աթոռների, սեղանների, տաճկական և ոչ տաճկական բազմոցների ու այլևայլ տնային իրերի ամբողջ լեռներով բեռնավորված սայլերին կից ընթացող սայլապանների երկայն շարանը և այդ լեռների գագաթին փառավորապես բազմած վտիտ խոհարարուհուն, որ իր տիրոջ ապրանքը աչքի լույսի պես է պահում, երբ տեսնում էի տնային իրերով ծանր բեռնավորված

նավակները, որ Նևայի կամ Ֆոնտանկայի վրայով սահում էին դեպի Սև գետը՝ իմ աչքում տասնապատկվում, հարյուրապատկվում էին թե՛ սայլերն ու թե՛ նավակները: Եվ թվում էր ինձ, որ ամեն ինչ ոտքի է ելել, ամեն ինչ տեղափոխվել է ամառանոց, թվում էր, որ ամբողջ Պետերբուրգն սպառնում է ամայանալ, անապատ դառնալ, այնպես որ, վերջիվերջո, ես սկսեցի ամաչել վիրավորվելու տխրել, որ ինքս ձեռնհասություն չունեի ամառանոց գնալու: Ես պատրաստ էի գնալ յուրաքանչյուր սայլի հետ, յուրաքանչյուր պատկառելի արտաքին ունեցող և սայլ վարձած պարոնի հետ: Բայց, ավա՜ղ, ո՛չ մեկը և ո՛չ ոք ինձ չէր հրավիրում: Կարծես ինձ մոռացել էին, կարծես ես նրանց համար իսկապես օտար էի:

Մի օր ես շատ երկար մանեկա, այնչափ, որ, համաձայն իմ սովորության՝ մոռացա ուր լինելս. երբ հանկարծ ինքս ինձ տեսա քաղաքի մաքսային արգելանի մոտ: Վայրկենաբար ինձ պաշարեց մի ուրախություն, և ես ցատկելով արգելանի մյուս կողմը, քայլեցի ցանված արտերի ու արոտատեղերի միջով: Ես հոգնածություն չէի զգում, զգում էի միայն իմ ամբողջ կազմով, որ մի ինչ-որ բեռ ընկնում է իմ հոգուց: Բոլոր անցորդները նայում էին ինձ այնքան բարեհամբույր, որ քիչ էր մնում գլուխ տային ինձ: Ամենքն ուրախ էին, չգիտեմ ինչու, ամենքն, առանց բացառության, սիգար էին ծխում: Իսկ ես այնչափ էի ուրախ, որչափ երբեք չէի եղել: Կարծես հանկարծակի ընկել էի Իտալիա. բնությունն այն աստիճանի զորեղ էր ոգևորել ինձ՝ կիսահիվանդ քաղաքացուս, որ քիչ էր մնացել խեղդվեր քաղաքի պատերի մեջ:

Կա ինչ-որ մի անբացատրելի-սրտաշարժ բան մեր

պետերբուրգյան բնության մեջ, երբ այն գարնան սկզբին հանկարծ արձակում է երկնքից տրված իր բոլոր ուժերը, զուգվում ու զարդարվում է բոլոր գույներով... Նա ինձ ակամա հիշեցնում է այն հիվանդոտ ու վտիտ աղջկան, որին նայում եք երբեմն կարեկցությամբ, երբեմն կարեկցական սիրով, երբեմն էլ ուղղակի չեք նկատում նրան, և որը, սակայն, մի վայրկյան է անբացատրելիորեն զմայլելիգեղեցիկ, և դուք սքանչացած, ակամա հարցնում եք. այն ո՞ր զորությունն է ստիպել այդ տխուր, մտախոհ աչքերին այդպիսի հրով փայլելու։ Ի՞նչն է արյունը մղել դեպի այդ գունատ ու նիհար այտերը։ Ի՞նչն է կրքով ողողել դեմքի այդ նուրբ ու քնքույշ գծերը։ Ինչո՞ւ է այդպես փքվում այդ կուրծքը։ Ի՞նչն է այդպես հանկարծակի ուժ, կյանք ու գեղեցկություն տվել խեղճ աղջկա երեսին, ի՞նչն է ստիպել այդ երեսը փայլել այդպիսի ժպիտով, կենդանանալ այդպիսի կայծարձակ ու պսպղուն ծիծաղով։ Դուք նայում եք ձեր շուրջը, դուք փնտրում եք մեկին, դուք աշխատում եք գուշակել... Սակայն վայրկյանն անցնում է, և գուցե վաղը դուք նորեն հանդիպեք նույն մտախոհ ու ցրված հայացքը, ինչ-որ առաջ էր, նույն գունատ երեսը, նույն հեզությունն ու անվստահությունը շարժումների և նույնիսկ մի տեսակ մեռելային անձկություն ու զղջում որպեսական հափշտակման համար... Եվ դուք ցավում եք, որ այդպես շուտ, այդպես անվերադարձ թառամեց վայրկենական գեղեցկությունը, որ նա այդպես խաբուսիկ ու զուր փայլեց ձեր առջև, ցավում եք այն պատճառով, որ նրան սիրելու անգամ ժամանակ չունեցաք...

Այնուամենայնիվ, իմ գիշերն եղավ ավելի լավ, քան ցերեկը։ Ահա թե ինչպես։

Ես քաղաք եկա շատ ուշ, և արդեն տասը ժամը զարկել էր, երբ մոտեցա իմ բնակարանին: Ես գալիս էի ջրանցքի առափնյա փողոցով, ուր այդ ժամին ոչ ոք չի լինում սովորաբար: Ես ապրում եմ քաղաքի ամենահեռավոր մի մասում: Ես գալիս էի երգելով, որովհետև երբ ես երջանիկ եմ, անպատճառ մի բան մրթմրթում եմ քթիս տակ, ինչպես և ամեն մի երջանիկ մարդ, որ չունի ոչ բարեկամներ, ոչ բարի ծանոթներ, որոնց հետ կարողանար բաժանել իր ուրախությունը: Հանկարծ ինձ պատահեց մի ամենաանսպասելի արկած:

Ջրանցքի ափին կանգնած էր մի կին: Ցանկապատին հենված՝ նա, ըստ երևույթին, նայում էր ջրանցքի պղտոր ջրին: Նա հագած էր պճնազարդ սևագույն վերարկու և գլխին դրած էր մի սիրուն դեղնագույն գլխարկ: «Սա աղջիկ է, և անպատճառ սևահեր», մտածեցի ես: Նա կարծեմ չլսեց իմ քայլերի ձայնը, նա նույնիսկ չշարժվեց, երբ ես անցա նրա մոտով՝ շունչս զսպած և սաստիկ բաբախող սրտով: «Տարօրինակ է, մտածեցի ես, երևի նա շատ խորը մտածման մեջ է», և հանկարծ տեղն ու տեղս կանգ առա բևեռվածի պես: Ես լսեցի մի խուլ հեկեկանք: Այո, ես սխալված չէի. աղջիկը լալիս էր և հետզհետե ավելի ու ավելի ուժգին: Աստված իմ: Սիրտս սկսեց ճմլտվել: Որքան էլ կանանց վերաբերմամբ տատամսոտ լինեի, որպեն բացառիկ էր: Ես հետ դարձա, մոտեցա նրան և անպատճառ կարտասանեի «տիրուհի», եթե չգիտենայի, որ այս ածականը հազար անգամ արտասանվել է ռուսական բոլոր բարձրաշխարհիկ վեպերում: Այդ էր միայն, որ լեզուս զսպեց: Բայց մինչ ես մտքումս մի ուրիշ բառ էի փնտռում, աղջիկն ուշքի եկավ, հետ նայեց, շփոթվեց ու շտապեց

հեռանալ ինձնից: Ես անմիջապես հետևեցի նրան, բայց նա, այս տեսնելով, թողեց ափը, անցավ դիմացի մայթը: Ես չհամարձակվեցի փողոցն անցնել: Սիրտս թրթռում էր՝ ինչպես որսված թռչնի սիրտը: Շանկարծ մի դիպված ինձ օգնության եկավ:

Մայթի մյուս կողմում, իմ անծանոթուհուց ոչ հեռու երևաց ֆրակը հագին սոլիդ տարիքով, բայց չի կարելի ասել սոլիդ քայլվածքով մի մարդ: Նա ընթանում էր երերվելով և զգուշաբար հենվելով պատերին: Իսկ աղջիկը սլանում էր սլաքի պես, փութկոտ և անվստահ, ինչպես ընթանում են առհասարակ այն բոլոր աղջիկները, որոնք չեն կամենում, որ որևէ մեկը ցանկություն հայտնի՝ գիշերը նրանց ուղեկցելու դեպի տուն: Իհարկե, երերվող պարոնը երբեք չէր կարող նրան հասնել, եթե իմ ճակատագիրը նրան չդրդեր արվեստական միջոցների դիմելու: Եվ ահա հանկարծ իմ պարոնը, առանց մի բառ արտասանելու, իր կանգնած տեղից պոկվում է և սրընթաց վազում է իմ անծանոթուհու հետևից: Աղջիկը թռչում էր հողմի պես, բայց երերվող պարոնը հասավ նրան: Աղջիկը ճչաց, իսկ ես... օրհնում եմ ճակատագրին այն կեռկեռոտ ձեռնափայտի համար, որ այս անգամ իմ աջ ձեռքումն էր: Ես վայրկենաբար անցա մայթի մյուս կողմը, վայրկենաբար անկոչ պարոնը հասկացավ բանի էությունը, անհաղթելի խելամտությունը հաշվի առավ, լռեց, հետ ընկավ և միայն այն ժամանակ սկսեց իմ դեմ բողոքել բավականին եռանդուն ածականներով, երբ մենք արդեն շատ հեռու էինք: Սակայն նրա խոսքերը հազիվհազ հասան մեր լսելիքին:

- Տվեք ինձ ձեր ձեռը,- ասացի ես իմ անծանոթուհուն,- և նա այլևս չի համարձակվի մեզ մերձենալ:

Նա լուռ տվեց ինձ իր ձեռը, որ դեռ դողում էր ահից ու հուզմունքից: Ա՛հ, անկոչ պարոն: Ինչպե՞ս ես այդ րոպեին օրհնում էի քեզ: Ես թեթևակի նայեցի աղջկան: Նա շատ սիրուն էր ու սևահեր. ես գուշակել էի: Նրա սև արտևանունքի վրա տակավին փայլում էր արտասուքը՝ այժմյան ահից, թե՛ առաջվա վշտից՝ չգիտեմ: Բայց շրթունքների վրա արդեն փայլում էր ժպիտը: Նա նայեց ինձ նույնպես գողտուկ, թեթևակի կարմրեց և հայացքը վար նետեց:

- Ահա տեսնում եք, ինչո՞ւ այն ժամանակ չթողեցիք ձեզ մերձենալու: Եթե ես ձեզ մոտ լինեի, ոչինչ չէր պատահի...

- Ես ձեզ չէի ճանաչում, ես կարծում էի դուք էլ...

- Բայց մի՞թե այժմ ինձ ճանաչում եք:

- Մի փոքր: Ահա, օրինակ, ինչո՞ւ համար եք դողում:

- Ա՛հ, դուք գուշակեցիք հենց առաջին հայացքից,- պատասխանեցի ես՝ աղջկա խելացիությամբ հիացած:- Այո, դուք հենց առաջին հայացքից գուշակեցիք: Ճիշտ է, ես կանանց վերաբերմամբ քաջարի չեմ, ես հուզված եմ, չեմ վիճում, ձեզնից ոչ պակաս, մի քիչ առաջ, երբ այդ պարոնը ձեզ վախեցրեց... Այժմ ես ինչ-որ ահի մեջ եմ: Կարծես երազում եմ, իսկ ես երազումս էլ չէի կարող երևակայել, թե երբևիցե պիտի խոսեմ որևէ կնոջ հետ:

- Ինչպե՞ս: Մի՞թե...

- Այո, եթե իմ ձեռը դողում է, պատճառն այն է, որ երբեք նրան չի սեղմել մի այնպիսի փոքրիկ ու սիրունիկ ձեռ, որպիսին ձերն է: Ես միանգամայն խորթացել եմ կանանցից, այսինքն՝ ես երբեք չեմ էլ ընտելացել նրանց... ես մենակ եմ... Ես մինչև անգամ չգիտեմ՝ չասացի՞ արդյոք ձեզ որևէ հիմարություն: Ասացեք ինձ ուղղակի. կանխավ

ասում եմ, որ ես վիրավորվող մարդ չեմ...

- Ոչ, դուք ոչ մի հիմարություն չասացիք, ընդհակառակը: Եվ եթե դուք պահանջում եք, որ սրտաբաց լինեմ, կասեմ ձեզ, որ տղամարդի այդ տեսակ անհամարձակությունը կանանց դուր է գալիս, իսկ եթե կամենում եք ավելին գիտնալ, ինձ էլ դուր է գալիս, իսկ եթե կամենում եք ավելին գիտնալ, ինձ էլ նա դուր է գալիս, և ես մինչև տուն ձեզնից խույս չեմ տալու:

- Վախենում եմ՝ դուք այնպես անեք,- սկսեցի ես հիացմունքից խեղդվելով,- որ ես դադարեմ անհամարձակ լինել, այն ժամանակ մնաք բարով իմ միջոցներ...

- Միջոցնե՞ր: Ի՞նչ միջոցներ, ինչի՞ վերաբերմամբ: Այդ արդեն վատ է:

- Ներեցեք, լեզվիցս թռավ այդ խոսքը, բայց ինչպե՞ս կկամենայիք, որ այդպիսի մի րոպեին չլիներ ցանկություն...

- Ցանկություն դուր գալո՞ւ, արդյոք:

- Դե, իհարկե: Ի սեր Աստծու, եղեք բարի, ինքներդ դատեցեք, ո՞վ եմ ես: Ահա արդեն քսանվեց տարեկան եմ և երբեք ոչ մեկին չեմ տեսել: Ուրեմն ինչպե՞ս կարող եմ խոսել և՛ լավ, և՛ հաջող, և՛ տեղին: Չէ՞ որ ձեզ համար ձեռնտու է, որ ես լինեմ անկեղծ ու պարզ: Ես չգիտեմ լռել, երբ սիրտս է խոսում իմ մեջ: Այո, իհարկե, միևնույնն է: Շավատացեք, ոչ մի կին, երբե՛ք, երբե՛ք: Ոչ մի ծանոթություն: Եվ ամեն օր երազում եմ, թե, վերջապես, երբևէ ես կհանդիպեմ որևէ մեկին: Ախ, եթե դուք գիտնայիք քանի անգամ եմ ես այս ձևով սիրահարվել...

- Բայց ինչպե՞ս, ո՞ւմ վրա...

- Ոչ ոքի, իդեալիս վրա, նրա, որին տեսնում եմ երա-

զումս: Ես իմ տեսիլների մեջ ստեղծում եմ ամբողջ վեպեր: Ա՛հ, դուք ինձ չեք ճանաչում: Ճիշտ է, առանց այդ չի լինի, մի երկու-երեք կանանց հանդիպել եմ, բայց ի՞նչ կանայք էին: Տնտեսուհիների նման բաներ էին, այնպես որ... Բայց ես ձեզ պիտի ծիծաղեցնեմ, ես ձեզ կասեմ, որ ես մի քանի անգամ մտածել եմ փողոցում մի որևէ արիստոկրատ կնոջ հետ պարզ ի պարզո խոսել, իհարկե, երբ նա մենակ է, խոսել, ինչ ասել կուզի, հարգանքով, անհամարձակ, կրքոտ, ասել, որ ես կործանվում եմ մեն-մենակ, որ թող նա ինձ չվռնդի, որ չունեմ ուրիշ միջոց գոնե մի կին ճանաչելու, ներշնչել նրան այն միտքը, որ կնոջ պարտականությունն է չմերժել ինձ պես դժբախտ մարդու խեղճուկ աղերսը: Մտածել եմ ասել, որ իմ ամբողջ պահանջը վերջապես այն է, որ իրավունք տրվի ինձ ինչ-որ մի երկու եղբայրական խոսքեր ասելու, որ հենց առաջին քայլից ինձ չվռնդի, հավատա ինձ, ասելիքս լսի, ծիծաղի ինձ վրա՝ եթե կամենա, հուսադրի ինձ, մի երկու խոսք ասի, միայն երկու խոսք, այնուհետև թող թեկուզ չհանդիպենք իրար: Բայց դուք ծիծաղում եք... ասենք ես դրա համար էլ ասում եմ...

- Չնեղանաք, ես ծիծաղում եմ այն բանի վրա, որ դուք ինքներդ ձեր թշնամին եք: Եթե դուք փորձեիք, գուցե ձեզ հաջողվեր, թեկուզ բանը փողոցում պատահեր.... Որքան պարզ, այնքան լավ: Ոչ մի բարի կին, եթե միայն հիմար չի կամ այդ պահին առանձնապես բարկացած չի որևէ բանի վրա, չէր համարձակվի ձեզ վռնդել՝ առանց ձեր աղերսած այդ երկու խոսքն ասելու... Սակայն ինչ եմ ասում: Իհարկե, ձեզ խելագարի տեղ կընդուներ: Ես դատում եմ ըստ իս: Ես ինքս շատ բան գիտեմ այն մասին, թե մարդիկ ինչպես են ապրում աշխարհի վրա:

- Ա՛հ, շնորհակալ եմ,- գոչեցի ես,- դուք չգիտեք, թե ինչ արիք ինձ համար։

- Լավ, լավ։ Բայց, ասացեք խնդրեմ, ինչի՞ց դուք գիտցաք, որ ես մի այնպիսի կին եմ, որի հետ... որին, վերջապես, դուք համարեցիք արժանի... ուշադրության և բարեկամության։ Որին, կարճ ասած, չհամարեցիք, ինչպես դուք անվանեցիք, տնտեսուհի։ Ինչո՞ւ դուք վճռեցիք ինձ մոտենալ։

- Ինչո՞ւ։ Ինչո՞ւ։ Բայց դուք մենակ էիք, այն պարոնը չափազանց համարձակ էր, այժմ գիշեր է։ Համաձայնվեցեք, որ այդ իմ պարտականությունն էր...

- Ո՛չ, ո՛չ, այդ չեմ ասում, այլ այն, ավելի առաջվանը։ Չէ՞ որ դուք այդ պարոնին տեսնելուց առաջ էլ կամեցաք ինձ մոտենալ։

- Այնտե՞ղ, մյուս կողմո՞ւմ։ Ճշմարիտն ասած՝ չգիտեմ ինչ պատասխանել... Եվ վախենում եմ... Գիտեք, ես այսօր երջանիկ էի, ես գնում էի երգելով։ Ես եղել էի քաղաքից դուրս։ Ես երբեք չէի ունեցել այդպիսի երջանիկ րոպեներ իմ կյանքում։ Դուք... չգիտեմ, կարելի է ինձ այդպես թվաց... Ներեցեք ինձ, որ պիտի հիշեցնեմ... ինձ թվաց, որ դուք լալիս էիք, և ես... չէի կարող լսել այդ... իմ սիրտը նեղվում էր... Ա՛հ, Աստված իմ... մի՞թե ես չէի կարող կարոտել ձեզ... Մի՞թե դեպի ձեզ եղբայրական կարեկցություն զգալը մեղք էր... Ներեցեք, ես ասացի, կարեկցություն... Մի խոսքով, մի՞թե ես կարող էի ձեզ վիրավորել նրանով, որ ակամա մտածեցի ձեզ մոտենալ...

- Թողեք, բավական է, մի՛ խոսեք,- արտասանեց աղջիկը, հայացքը ցած նետելով և սեղմելով ձեռքս։ Մեղավորը ես եմ, որ այդ մասին խոսք բաց արի, բայց ուրախ եմ,

որ ձեր վերաբերմամբ չսխալվեցի... Բայց ահա արդեն հասանք մեր տունը, ես պիտի անցնեմ այդ նրբանցքը, երկու քայլ է... Գնաք բարով, շնորհակալ եմ...

- Բայց մի՞թե, մի՞թե մենք երբեք այլևս չպիտի հանդիպենք իրարու... Մի՞թե դրանով էլ պիտի վերջանա։

- Տեսնո՞ւմ եք,- ասաց աղջիկը՝ ծիծաղելով,- սկզբում դուք միայն երկու խոսք էիք ցանկանում, իսկ այժմ... բայց, սակայն, ես ձեզ ոչինչ չեմ ասի... Գուցե և հանդիպենք իրար։

- Ես վաղն այստեղ կգամ,- ասացի ես։- Ա՛հ, ներեցեք ինձ, ես արդեն պահանջում եմ...

- Այո, դուք անհամբեր եք... Դուք գրեթե պահանջում եք...

- Լսեցե՛ք, լսեցե՛ք,- ընդհատեցի ես,- ներեցեք, եթե ես դարձյալ ասեմ մի որևէ անհարմար բան... Բայց ահա ինչ. ես չեմ կարող վաղն այստեղ չգալ։ Ես երազող մարդ եմ, ես այնքան քիչ իրական կյանք ունեմ, որ այնպիսի րոպեներ, որպիսին է ներկայինը, համարում եմ այնքան հազվագյուտ, որ չեմ կարող այդ րոպեները չկրկնել իմ երազների մեջ։ Ես ձեր մասին կերազեմ ամբողջ գիշեր, ամբողջ շաբաթ, ամբողջ տարի։ Ես վաղն անպատճառ կգամ այստեղ, ճիշտ այստեղ, նույնիսկ հենց այս վայրը և ճիշտ սույն ժամին ու կլինեմ երջանիկ, երեկվանը հիշելով։ Այս վայրն ինձ համար արդեն սիրելի է։ Պետերբուրգի մեջ ես ունեմ երկու-երեք այսպիսի տեղեր։ Ես մի անգամ նույնիսկ լաց եմ եղել հիշողություններից, ինչպես դուք... Ո՛վ գիտե, գուցե դուք էլ սրանից տասը րոպե առաջ լաց եք եղել հիշողություններից... Բայց ներեցեք ինձ, ես նորեն ինքս ինձ մոռացա, գուցե դուք երբևէ այստեղ երջանիկ եք եղել...

- Լավ,- ասաց աղջիկը,- վաղը ես էլ գուցե գամ այստեղ տասը ժամին: Տեսնում եմ, որ այլևս չեմ կարող ձեզ արգելել... Բանն այն է, որ ես պետք է այստեղ լինեմ, չկարծեք՝ թե տեսակցություն եմ նշանակում, ո՛չ, ես այստեղ պիտի լինեմ ինձ համար: Բայց ահա ինչ... դե լավ, ես ուղղակի կասեմ. ոչինչ, եթե դուք էլ գաք, առաջինը՝ որ դարձյալ կարող է այսօրվա պես անախորժություն պատահել, սակայն այս մի կողմ թողնենք... Մի խոսքով, ես կկամենայի պարզապես ձեզ տեսնել, որպեսզի երկու խոսք ասեմ ձեզ: Միայն, գիտեք, ինձ չպիտի մեղադրեք, այնպես չէ՞: Չկարծեք, որ ես հեշտությամբ եմ տեսակցություն նշանակում... Ես չէի էլ նշանակի, եթե... բայց թող այս իմ գաղտնիքը լինի: Միայն կանխապես մի պայման...

- Պայմա՛ն: Խոսեցեք, ասացեք, ամեն ինչ ասացեք կանխավ, ես ամեն ինչի համաձայն եմ, պատրաստ եմ ամեն բանի,- գոչեցի ես հիացմամբ,- ես իմ մասին պատասխանատու եմ, ես կլինեմ հնազանդ, օրինակելի... դուք ինձ ճանաչում եք...

- Ես էլ հենց նրա համար եմ ձեզ վաղը հրավիրում, որ ձեզ ճանաչում եմ,- արտասանեց աղջիկը՝ ծիծաղելով:- Ես ձեզ ճանաչում եմ կատարելապես: Բայց ներեցեք, եկեք պայմանով. առաջինը (միայն բարի եղեք կատարելու բոլորը, ինչ որ պիտի խնդրեմ,- տեսնո՞ւմ եք, ես անկեղծորեն եմ խոսում)՝ չսիրահարվեք ինձ վրա... Այդ չի կարելի, հավատացնում եմ ձեզ: Բարեկամության համար պատրաստ եմ, ահա իմ ձեռը... Իսկ սիրահարվել չի կարելի, խնդրում եմ...

- Երդվում եմ,- գոչեցի ես, բռնելով նրա ձեռը:

- Բավական է, մի՛ երդվեք, գիտե՛մ, դուք պատրաստ

եք վառոդի պես պայթելու: Մի՛ դատապարտեք ինձ այսպես խոսելուս համար... Եթե դուք գիտնայիք... Ես և՛ս չունեմ մեկը, որի հետ կարողանայի մի խոսք խոսել և որից կարողանայի մի որևէ խորհուրդ հարցնել: Իհարկե, հո չի՞ կարելի փողոցներում խորհրդատուներ փնտրել, դուք բացառություն եք: Ես ձեզ այնպես եմ ճանաչում, որ կարծես քսան տարի բարեկամներ ենք եղել... Դուք չեք դավաճանի ինձ, այնպես չէ՞:

- Դուք կտեսնեք... Միայն թե ես չգիտեմ՝ ինչպես պիտի ապրեմ մինչև վաղը:

- Քնեցեք ամուր, բարի գիշեր, և հավատացեք, որ ես արդեն հավատում եմ ձեզ: Մի քիչ առաջ դուք այնպես լավ ասացիք, թե մի՞թե յուրաքանչյուր զգացման, նույնիսկ եղբայրական համակրանքի համար պիտի հաշիվ տալ: Գիտե՞ք, դա այնքան լավ էր ասված, որ նույն վայրկյանին իմ մեջ միտք ծագեց՝ հավատալ ձեզ...

- Բայց, ի սեր Աստծու, ինչո՞ւմ հավատալ: Ի՞նչ:

- Մինչև վաղը: Այժմ թող այդ գաղտնիք մնա: Ավելի լավ կլինի ձեզ համար, թեկուզ հեռվից կնմանվի մի ռոմանի: Կարելի է, ես վաղը ձեզ կասեմ, կարելի է, որ չասեմ էլ: Ես դեռ էլի կխոսեմ ձեզ հետ, մենք ավելի կծանոթանանք իրար...

- Օ՜, իհարկե, վաղը ես իմ մասին ամեն ինչ կպատմեմ ձեզ: Բայց այս ի՞նչ է, կարծես, հրաշք է պատահում ինձ... Որտե՞ղ եմ ես, Աստվա՜ծ իմ: Ասացեք. մի՞թե դուք գոհ չեք, որ չբարկացաք, չվռնդեցիք ինձ հենց սկզբում, մի ուրիշ աղջկա պես: Միայն երկու րոպե, և դուք ինձ արդեն ընդմիշտ երջանկացրիք: Այո, երջանկացրիք. ո՞վ գիտե, գուցե դուք ինձ հաշտեցրիք ինձ հետ, գուցե փարատեցիք

իմ կասկածները... գուցե ես այնպիսի րոպեներ ունեմ, որ... Բայց, այո, վաղը ես ամեն ինչ կպատմեմ, դուք ամեն ինչ կիմանաք, ամեն ինչ...

- Լավ, ընդունում եմ, հենց ինքներդ էլ կսկսեք...

- Համաձայն եմ։

- Ցտեսություն։

- Ցտեսություն։

Եվ մենք բաժանվեցինք։ Ես շրջեցի ամբողջ գիշեր. ես սիրտ չարի տուն դառնալ, ես այնպես երջանիկ էի... մինչև վա՛ղը։

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՇԵՐ

- Ահա, և ապրեցիք մինչև այս ժամը,- ասաց աղջիկը ծիծաղելով և ձեռքս սեղմելով:

- Արդեն երկու ժամ է այստեղ եմ, չգիտեք՝ ինչ դրության մեջ էի ամբողջ օրը:

- Գիտեմ, գիտեմ... Բայց դեպի գործ: Գիտե՞ք ինչու համար եկա: Չէ՞ որ երեկվա նման ցնդաբանություն չպիտի շաղակրատենք: Ահա ինչ. մենք պետք է այսուհետև խելացի վարվենք: Ես այդ մասին երկար եմ մտածել երեկ:

- Ի՞նչ բանում, ի՞նչ բանում պիտի խելացի վարվել: Իմ կողմից ես պատրաստ եմ, բայց, հավատացեք, կյանքումս ավելի խելոք բան չի պատահել ինձ, քան այժմ...

- Իրո՞ք: Առաջինը՝ խնդրում եմ ձեզ, այդպես մի սեղմեք իմ ձեռները, երկրորդ՝ հայտնում եմ ձեզ, որ այսօր ես ձեր մասին երկար մտածեցի:

- Հետո՞, ինչո՞վ վերջացավ:

- Ինչով վերջացա՞վ: Վերջացավ նրանով, որ հարկավոր է ամեն բան նորից սկսել, որովհետև որպես եզրակացություն՝ ես այսօր որոշեցի, որ դուք դեռ ինձ բոլորովին անծանոթ եք, որ ես երեկ վարվեցի ինչպես մի երեխա կամ մի աղջիկ և, իհարկե, դուրս եկավ, որ մեղավորն ամեն բանի մեջ իմ բարի սիրտն է, այսինքն՝ ես ինձ գովեցի: Այդ պատճառով, որպեսզի սխալս ուղղեմ, վճռեցի ամենամանրամասն կերպով տեղեկանալ ձեր մասին: Բայց որովհետև չկա մի ուրիշը, որից տեղեկանայի, ուստի ինքներդ պիտի ինձ պատմեք ամեն ինչ տակից մինչև գլուխ: Դեհ, ասացեք, ո՞վ եք, ի՞նչ մարդ եք դուք: Շուտ սկսեցեք, պատմեցեք ձեր պատմությունը:

- Պատմությո՛ւնը,- գոչեցի ես, վախեցած,- պատմությո՛ւնը: Բայց ո՞վ ձեզ ասաց, թե ես պատմություն ունեմ: Ես պատմություն չունեմ...

- Ուրեմն ինչպե՞ս եք ապրելդուք, քանի որ պատմություն չունեք,- ընդհատեց նա խոսքս, ծիծաղելով:

- Միանգամայն առանց որևէ պատմությունների: Ապրել եմ հենց այնպես, ինչպես մեզանում ասում են, ինքս ինձ համար, այսինքն՝ մեն-մենակ, միանգամայն մենակ,- հասկանո՞ւմ եք՝ ինչ ասել է մենակ:

- Բայց ինչպե՞ս մենակ: Այսինքն՝ դուք երբեք ոչ ոքի չե՞ք տեսել:

- Օ՛, ոչ, տեսնելը տեսնում եմ, բայց և այնպես մենակ եմ:

- Ուրեմն դուք ոչ ոքի հետ չե՞ք խոսում:

- Լուրջ իմաստով՝ ոչ ոքի հետ:

- Բայց ո՞վ եք դուք, բացատրեցե՛ք: Սպասեցեք, ես գուշակում եմ, երևի դուք էլ տատ ունեք ինձ նման: Իմ տատը կույր է և ահա ամբողջ կյանքս նա ինձ ոչ մի տեղ չի թողել գնալու, այնպես որ ես գրեթե խոսելը միանգամայն մոռացել եմ: Բայց երբ ես սրանից երկու տարի առաջ չարաճճիություն արի, նա տեսավ, որ ինձ պահել անկարելի է, կանչեց ինձ և գնդասեղով իմ զգեստը կպցրեց իր զգեստին՝ և այն ժամանակից ահա ամբողջ օրերով նստած ենք միասին: Նա գուլպաներ է հյուսում՝ թեև կույր է, իսկ ես պիտի նրա մոտ նստեմ՝ կար անեմ կամ բարձր ձայնով գիրք կարդամ նրա համար: Դա մի տարօրինակ սովորություն է, որ ես ահա երկու տարի է արդեն գնդասեղով կպած եմ իմ տատին:

- Ա՛հ, Աստված իմ, ի՛նչ դժբախտություն: Ո՛չ, ես այդ-

թվագրել է 1915.ին Կայսր

պիսի տատ չունեմ։

- Քանի որ չունեք, այդ ինչպե՞ս եք կարողանում տանը նստել։

- Լսեցեք, դուք կամենում եք գիտնալ՝ ով եմ ես։

- Դե, իհարկե, իհարկե։

- Բառի լուրջ իմաստո՞վ։

- Բառի ամենալուրջ իմաստով։

- Շամեցեք, ես տիպ եմ։

- Տի՛պ, տի՛պ։ Ի՞նչ տիպ,- գոչեց աղջիկը, այնպես քրքջալով, որ կարծես ամբողջ մի տարի նրան չէր հաջողվել ծիծաղել։- Չէ՛, չէ՛, ձեզ հետ շատ զվարճալի է։ Տեսե՛ք, այստեղ մի նստարան կա։ Նստենք։ Այստեղ ոչ ոք չի շրջում, մեզ ոչ ոք ականջ չի դնի, և սկսեցեք ձեր պատմությունը, որովհետև դուք այլևս ինձ չեք կարող հավատացնել, թե պատմություն չունեք։ Ունեք, միայն թաքցնում եք։ Առաջինը՝ ի՞նչ բան է տիպը։

- Տի՞պը։ Տիպը մի օրիգինալ բան է, այնպես, մի ծիծաղելի մարդ,- պատասխանեցի ես, ինքս էլ քրքջալով նրա մանկական ծիծաղից հետո։- Դա մի տեսակ բնույթ է։ Լսեցեք, գիտե՞ք արդյոք ինչ ասել է երազող։

- Երազո՛ղ։ Ինչպե՛ս չգիտնալ։ Ես ինքս երազող եմ։ Պատահում է, որ տատիս մոտ նստած՝ ինչեր ասես պաշարում է գլուխս։ Եվ ահա սկսում ես երևակայել այնպես, որ, ինչ ասեմ, հանկարծ չինական մի իշխանի հետ ես ամուսնանում։ Բայց չէ՞ որ դա երբեմն լավ է- երազելը։ Սակայն, ո՛չ, Աստված գիտե։ Մանավանդ, եթե առանց այդ էլ ուրիշ մտածելու բաներ կան,- ավելացրեց աղջիկն այս անգամ բավականին լուրջ։

- Շատ բարի։ Եթե դուք ամուսնացել եք չինական բոլ-

դիխանի հետ, ուրեմն, միանգամայն հասկանում եք ինձ։ Դե՛, լսեցե՛ք... Բայց ներողություն, ես մինչև այժմ դեռ չգիտեմ ձեր անունը։

- Վերջապե՛ս։ Շատ շուտ մտաբերեցիք։

- Ա՛հ, Աստվա՛ծ իմ, խելքիս էլ չեկավ հարցնելու, առանց այդ էլ լավ է ինձ համար...

- Անունս Նաստենկա է։

- Նաստենկա՞։ Միայն այդ։

- Միայն։ Մի՞թե այդ քիչ է ձեզ համար, ինչ անկուշտն եք։

- Քի՞չ է։ Ոչ, շատ է, ընդհակառակը։ Նաստենկա, դուք բարի աղջիկ եք, քանի որ հենց առաջին անգամից ինձ համար Նաստենկա դարձաք։

- Էհե՛, տեսաք, դե՛հ։

- Դե՛հ, լսեցեք, Նաստենկա, տեսեք ինչ ծիծաղելի պատմություն է դուրս գալիս։

Ես նստեցի նրա մոտ, լուրջ կեցվածք ընդունեցի և սկսեցի սերտած դասի պես արտասանել։

- Նաստենկա, կան, եթե դուք այդ չգիտեք, կան Պետերբուրգում բավական տարօրինակ անկյուններ։ Այդ տեղերը կարծես նույն արեգակը չի թափանցում, որը լույս է տալիս բոլոր պետերբուրգցիներին, այլ թափանցում է մի ինչ-որ նոր, կարծես հատկապես այդ անկյունների համար պատվիրած արեգակ և ամեն ինչ լուսավորում է մի առանձին տեսակ լույսով։ Այդ անկյուններում, սիրելի Նաստենկա, կարծես թե մի ուրիշ կյանք է ապրում, ոչ նման այն կյանքին, որ եռում է մեր շուրջը, մի կյանք, որ կարող է լինել յոթ սարից, յոթ ձորից այն կողմ գտնվող անհայտ թագավորության մեջ, բայց ոչ թե մեզ մոտ, մեր

լուրջ-լրջագույն ժամանակներում: Ահա այդ կյանքը ինչ-որ մի մաքուր-ֆանտաստիկականի, ջերմ-իդեալականի և միևնույն ժամանակ (ավա՜ղ, Նաստենկա) աղոտ-պրոզայինի, սովորականի, որպեսզի չասենք ծայրաստիճան ճղճիմի մի խառնուրդ է:

- Ֆո՛ւ, տե՛ր իմ Աստված, ի՜նչ հառաջաբան: Այդ ի՞նչ եմ լսում ես:

- Կլսեք, Նաստենկա (թվում է ինձ, որ ես երբեք չեմ հոգնի՝ ձեզ Նաստենկա անվանելով), կլսեք, որ այդ անկյուններում ապրում են տարօրինակ մարդիկ- երազողներ: Երազողը, եթե հարկավոր է դրա մանրամասն բացատրությունը, մարդ չէ, այլ մի ինչ-որ միջին սեռի մի էակ: Պատսպարվում է նա մեծ մասամբ մի որևէ անմատչելի անկյունում և կարծես նույնիսկ ցերեկվա լույսից թաքնվում է այնտեղ: Մի անգամ տեղավորվելով իր անկյունում, արդեն պատվԱստվում է նրան, ինչպես խխունջն իր կեղևին: Այո՛, նա շատ նման է գոնե այն հետաքրքրական կենդանուն, որը միաժամանակ և՛ կենդանի է, և՛ տուն և որը կոչվում է կրիա: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ համար է նա այդպես սիրում իր չորս պատերը, որոնք ներկված են անպատճառ դեղնագույն, մխոտված են, մռայլ և աններելիի չափ տոգորված ծխախոտի ծխով: Ինչո՞ւ այդ ծիծաղելի պարոնը, երբ նրա մոտ այցելության է գալիս իր հազվագյուտ ծանոթներից մեկը (վերջիվերջո բոլոր ծանոթները խուսափում են նրանից), ինչո՞ւ հարցնում եմ, այդ ծիծաղելի պարոնը հանդիպում է նրան այնպես շփոթված, քաշվելով և այնպես այլայլված, որ կարծես հենց նոր մի ոճիր է գործել իր չորս պատերի մեջ, կարծես նա կեղծ դրամ է կտրել կամ ինչ-որ ոտանավորներ է հորինել ամսագրին ուղար-

կելու համար մի անստորագիր նամակի հետ, ուր գրվում է, թե բանաստեղծն ինքը մեռած է և թե նրա բարեկամն իր սրբազան պարտականությունն է համարում հրատարակել նրա ոտանավորները: Ասացեք, Նաստենկա, ինչո՞ւ այդ երկու խոսակիցների մեջ զրույցը չի հաջողվում: Ինչո՞ւ մի ծիծաղ կամ զվարթ բառ չի թռչում հանկարծակի ներս մտած և մտամոլոր բարեկամի բերնից, մի մարդու, որ առհասարակ շատ է սիրում և՛ ծիծաղը, և՛ զվարթ խոսքը, և՛ զրույցը գեղեցիկ սեռի ու այլ և այլ ուրախ նյութերի մասին: Վերջապես, ինչո՞ւ այդ բարեկամը, որ երևի նոր է ծանոթացել և առաջին այցն է, որ անում է, որովհետև նման դեպքում երկրորդը չի լինելու, բարեկամս էլ այլևս չի գա. ինչո՞ւ այդ բարեկամը ինքն այդպես քաշվում է, այդպես քարանում, չնայելով իր սրամտությանը (եթե միայն ունի), նայելով տանտիրոջ շուռ եկած դեմքին: Ինչո՞ւ տանտերը միանգամայն արդեն ինքն իրեն կորցրել է՝ խոսակցությունը հարթելու, գունավորելու, իր կողմից աշխարհային վարք ու բարքի ծանոթություն ցույց տալու, նույնպես գեղեցիկ սեռի մասին զրուցելու և գեթ դրանով սխալմամբ եկած խեղճ այցելուին դուր գալու հսկայական ու ապարդյուն ջանքերից հետո: Ինչո՞ւ հյուրը հանկարծ ճանկում է իր գլխարկը և դուրս է գալիս շտապով, անակնկալ հիշելով մի կարևորագույն գործ, որ երբեք չի եղել, և մի կերպ իր ձեռն ազատելով տանտիրոջ ջերմ սեղմումներից, տանտիրոջ, որ ամեն կերպ աշխատել է ցույց տալ զղջում և կորցրածը վերադարձնել: Ինչո՞ւ հեռացող բարեկամը, դռներից դուրս գալով, քրքջում է և տեղնուտեղը խոսք է տալիս իրեն այլևս երբեք չգալ այդ խենթի մոտ, թեև խենթն ինքնըստինքյան շատ լավ տղա է:

- Լսեցեք,- ընդհատեց խոսքս Նաստենկան, որ ամբողջ ժամանակ ականջ էր դնում ինձ զարմացած, աչքերն ու բերանը բաց,- լսեցեք, ես չգիտեմ միանգամայն, թե ինչից պատահեց այդ բոլորը և դուք ինչու համար եք տալիս այդպիսի ծիծաղելի հարցեր: Մի բան, որ հաստատ գիտեմ, այն է, որ բոլոր այդ արկածները պատահել են անպատճառ ձեզ հետ, բառ առ բառ:

- Անկասկա՛ծ,- ասացի ես ամենալուրջ եղանակով:

- Դե՛, քանի որ անկասկած է, շարունակեցեք,- պատասխանեց Նաստենկան,- որովհետև ես շատ եմ ուզում գիտնալ՝ ինչով պիտի այդ վերջանա:

- Դուք կամենո՞ւմ եք իմանալ, Նաստենկա, թե ինչ էր անում իր անկյունում մեր հերոսը, կամ ավելի ճիշտն ասած, ես, որովհետև իմ պատմության հերոսը ես եմ՝ իմ սեփական համեստ անձնավորությամբ: Դուք կամենո՞ւմ եք իմանալ, թե ինչու ես այդպես դես ու դեն ընկա, այդպես կարմրեցի, երբ իմ սենյակի դուռը բաց արին, ինչո՞ւ ես չկարողացա հյուրիս ընդունել և այդպես ամոթալիորեն կործանվեցի սեփական հյուրընկալությանս ծանրության ներքո:

- Դե, իհա՛րկե, իհա՛րկե,- պատասխանեց Նաստենկան,- հենց բանն էլ այդ է: Լսեցե՛ք, դուք շատ գեղեցիկ եք պատմում, բայց չի՞ կարելի արդյոք որևէ կերպ ո՛չ այդպես գեղեցիկ պատմել, թե չէ՝ դուք այնպես եք խոսում, որ կարծես գիրք եք կարդում:

- Նաստենկա,- պատասխանեցի ես լուրջ ու խիստ ձայնով, հազիվ ծիծաղս զսպելով,- սիրելի Նաստենկա, ես գիտեմ, որ գեղեցիկ եմ պատմում, բայց, ներեցեք, ուրիշ կերպ պատմել չգիտեմ: Այժմ, սիրելի Նաստենկա, այժմ

ես նման եմ Սողոմոն թագավորի ոգուն, որ հազար տարի փակված է եղել յոթ կնիքներով մի արկղիկի մեջ, որի յոթ կնիքները վերցրել են ու բաց արել: Այժմ, սիրելի Նաստենկա, քանի որ մենք այդպիսի երկար բացակայությունից հետո նորից հանդիպել ենք իրարու, որովհետև ես ձեզ վաղուց է ճանաչում եմ, Նաստենկա, որովհետև ես վաղուց էի մեկին փնտրում, իսկ այս կնշանակի, ձեզ էի փնտրում, և թե մեզ վիճակված է եղել իրար տեսնել,- այժմ իմ գլխի մեջ բացվել են հազար կափարիչներ, և ես պիտի թափեմ խոսքերի գետ, այլապես կարող եմ խեղդամահ լինել: Այսպես ուրեմն, խնդրում եմ ինձ չընդհատել, Նաստենկա, այլ խոնարհ ու հեզ լսել, ապա թե ոչ՝ ես կլռեմ:

- Ո՛չ, ո՛չ, ո՛չ երբեք: Խոսեցեք: Այժմ ես ոչ մի խոսք չեմ ասի:

- Շարունակում եմ. իմ բարեկամ Նաստենկա, իմ օրվա մեջ կա մի ժամ, որ ես ծայրաստիճան սիրում եմ: Այդ նույն այն ժամն է, երբ վերջանում են գրեթե բոլոր գործերը, պաշտոնավարություններն ու պարտավորությունները, երբ ամենքը տուն են շտապում՝ ճաշելու, հանգստանալու, ու ճամփին իսկույն և-եթ հնարում են և ուրիշ ուրախալի թեմաներ երեկոյի, գիշերվա ու մյուս մնացյալ ազատ ժամանակի վերաբերմամբ: Այդ ժամին մեր հերոսն էլ, թույլտուր, Նաստենկա, պատմել երրորդ դեմքով, որովհետև շատ ամոթ է առաջին դեմքով պատմելը, այդպես, ուրեմն, նույն ժամին մեր հերոսը, որ նույնպես անգործ չէր, հետևում է ուրիշներին: Բայց նրա գունատ և կարծես մի փոքր թոշնած դեմքի վրա խաղում է գոհունակության ինչ-որ տարօրինակ մի զգացում: Նա անտարբեր չի նայում պետերբուրգյան սառը երկնքի դանդաղորեն մարող իրիկնային

վերջալույսի վրա։ Երբ ես ասում եմ՝ «նայում», ստում եմ։ Նա չի նայում, այլ դիտում է մի տեսակ անհաշիվ, կարծես հոգնած կամ որևէ ուրիշ, ավելի հետաքրքրական բանով զբաղված, այնպես որ հազիվհազ, գրեթե ակամա կարող է ուշադրություն դարձնելիր շուրջը։ Նա գոհ է, որովհետև մինչև հետևյալ օրն ազատ է իր համար ատելի գործերից, և ուրախ է որպես մի դպրոցական, որ դպրոցի նստարանից ազատված՝ վազում է դեպի իր սիրած խաղերն ու չարաճճիությունները։ Նայեցեք նրան կողքից, Նաստենկա, և դուք իսկույն կտեսնեք, որ ուրախ զգացումն արդեն նրա թույլ նյարդերի ու հիվանդոտ գրգռված երևակայության վրա բախտավոր ներգործություն է ունեցել։ Ահա նա սկսեց ինչ-որ մի բանի մասին մտածել։ Դուք կարծում եք՝ ճաշի՞ մասին։ Այն օրվա երեկոյի՞ մասին։ Ինչի՞ն է նա այդպես նայում։ Արդյոք այն պատկառելի արտաքին ունեցող պարոնի՞ն, որ այնպես պատկերավոր գլուխ տվեց փայլուն կառքի մեջ սլացող տիկնոջը։ Ո՛չ, Նաստենկա, նրա ինչի՞ն են պետք այդ բոլոր մանր-մունր բաները։ Նա այժմ արդեն հարուստ է իր առանձնակի կյանքով, նա հանկարծ հարստացավ, և զուր չէր, որ մարող արեգակի հրաժեշտի ճառագայթն այնպես ուրախ պսպղաց նրա առջև ու նրա ջերմացած սրտից պոկեց տպավորությունների ամբողջ երամ։ Այժմ նա հազիվ է նշմարում այն ճանապարհը, որի վրա առաջ ամենաչնչին մի հյուլե կարող էր նրան զարմացնել։ Այժմ «Ֆանտազիա դիցուհին» (եթե դուք, սիրելի Նաստենկա, կարդացել եք Ժուկովսկուն) իր քմահաճ ձեռով արդեն մանել է ոսկե հենքը և սկսել է նրա առջև չեղած, տարօրինակ կյանքի ծաղիկներ նկարազարդել. և, ով գիտե, գուցե իր քմահաճ ձեռով տեղափոխել է նրան

յոթերորդ հախճապակյա երկինք՝ գրանիտյա լավ մայթից, որով նա գնում էր իր տունը: Փորձեցեք այժմ նրան կանգնեցնել, հարցրեք նրան հանկարծ, որտե՞ղ է նա կանգնած այդ պահին, ո՞ր փողոցներով է անցել. անտարակույս ոչինչ չի հիշի, ո՛չ այն, թե որտեղ է քայլել, ո՛չ այն, թե որտեղ է հիմա կանգնած, և տհաճությունից կարմրելով, անպատճառ մի որևէ սուտ կասի վայելչությունը փրկելու համար: Ահա ինչու նա այնպես ցնցվեց, քիչ մնաց գոռար և երկյուղով նայեց շուրջը, երբ մի շատ պատկառելի պառավ հարգանքով կանգնեցրեց նրան մայթի մեջտեղում ու հարցրեց իր կորցրած ճանապարհը: Շոնքերը կիտած՝ նա շարունակում էր իր ճանապարհը, հազիվ նկատելով, որ մեկից ավելի անցորդներ, նայելով նրան, ժպտացել են ու հետ նայել, և որ մի որևէ փոքրիկ աղջիկ, նրան երկյուղով ճանապարհ տալով, բարձրաձայն ծիծաղել է, աչքերը չռած նայելով նրա լայն երազական ժպիտին ու նրա ձեռների շարժումներին:

Սակայն նույն ֆանտազիան իր խաղացկուն թռիչքի մեջ առավ և՛ պառավին, և՛ հետաքրքիր անցորդներին, և՛ խնդացող աղջկան, և՛ մուժիկներին, որ հենց այդտեղ իրենց իրիկվա հացն են ուտում նավերի վրա, որոնք ծածկել են Ֆոնտանկան (ենթադրենք, որ մեր հերոսն այդ միջոցին այդտեղից անցնելիս է լինում),- բոլորին և ամեն ինչ ներհյուսել է իր հյուսքի մեջ, ինչպես ճանճին սարդոստայնի մեջ, և նոր ստացվածքով մեր տարօրինակն արդեն ներս է մտել իր ուրախ բույնը, արդեն նստել է հացի սեղանին, արդեն վաղուց ճաշել է և ուշքի է եկել այն պահին, երբ մտախոհ մշտաթախիծ Մատրյոնան, որ սպասարկում է նրան, արդեն սեղանը հավաքել է և մատուցել նրան չի-

բուխը, և ահա նա ուշքի է եկել և զարմանքով մտաբերում է, որ նա ճաշ է արել պրծել, բոլորովին չնկատելով, թե դա ինչպես եղավ։

Սենյակը մթնեց։ Նրա հոգին դատարկ ու տխուր է։ Անուրջների մի ամբողջ թագավորություն խորտակվեց նրա շուրջը, խորտակվեց անհետ, անաղմուկ ու անճարճատում, անցավ որպես երազ, և այժմ նա ինքն էլչի հիշում, թե ինչ էր երազել։ Բայց ինչ-որ մի մութ զգացողություն, որից թեթևակի ցավից և հուզվում է նրա կուրծքը, մի ինչ-որ նոր ցանկություն գայթակղեցուցիչ կերպով խտղտում ու գրգռում է նրա ֆանտազիան և աննկատելիորեն կանչում, ժողովում է նոր ուրվականների մի ամբողջ երամ։ Փոքրիկ սենյակի մեջ տիրում է անդորրություն. մենությունն ու ծուլությունը շոյում են երևակայությունը, որ թեթևակի բոցավառվում է, թեթևակի եռում է, ինչպես ջուրը պառավ Մատրյոնայի սրճամանի մեջ, որ այնտեղ, խոհանոցում անվրդով իր խոհարարուհու սուրճն է եփում։ Ահա երևակայությունն արդեն թեթևակի արտահայտվում է ցոլքերով, ահա արդեն ընկնում է երազողի ձեռքից պատահաբար ու աննպատակ վերցրած գիրքը, որից հազիվ-հազ կարդացել է երեք երես։ Նրա երևակայությունը նորեն լարվեց, գրգռվեց, և հանկարծ մի նոր աշխարհ, մի նոր զմայլելի կյանք իր փայլուն ապագայով քայլեց նրա առջև։ Նոր երազ-նոր երջանկություն, նուրբ և անուշ թույնի մի նոր բաժին։ Ա՜հ, նրա ինչի՞ն է պետք մեր իրական կյանքը։ Նրա կաշառված հայացքով, Նաստենկա, դուք ու ես, ապրում ենք ծույլ, թմրած, դանդաղ։ Նրա հայացքով մենք ամենքս դժգոհ ենք մեր ճակատագրից և անչափ ձանձրանում ենք կյանքից։ Եվ իրավ, նայեցեք, առաջին հայաց-

քից որքա՛ն ամեն ինչ մեր մեջ սառն է, մռայլ, կարծես՝ նույնիսկ ցասկոտ... «Խեղճեր», մտածում է իմ երազողը: Եվ զարմանալի չէ, որ մտածում է... Նայեցեք այս մոգական տեսիլներին, որ այնքան չնաշխարհիկ են, այնքան կամայական, այնքան անափ և լայն դասավորվում են նրա առջև այնպիսի կախարդական և ոգեշունչ պատկերով, որի մեջ առաջնակողմում, առաջին անձը, իհարկե, նա ինքն է, մեր երազողը, իր թանկագին անհատականությամբ: Նայեցեք, թե ի՜նչ այլազան արկածներ են, ոգեշունչ անուրջների ինչ անվերջ երամ: Դուք կարելի է հարցնեք՝ ինչի՞ մասին է նա երազում: Ինչո՞ւ հարցնել այդ: Նա մտածում է ամեն բանի մասին... Սկզբում չգնահատված, հետո դափնիներով պսակված բանաստեղծի դերի մասին, Zոֆմանի հետ բարեկամության մասին, Բարդուղիմեոսյան գիշեր, Դիանա Վերնոն, Կազան քաղաքի՝ Իվան Վասիլևիչի գրավելու ժամանակ հերոսական դերի մասին, Կլարա Մովբրայ, Էփֆիա Դենս, պրելատների ժողով և նրա առջև Zուսսը, մեռելների ապստամբությունը «Ռոբերտ»- ի մեջ (հիշո՞ւմ եք երաժշտությունը. գերեզմանատան հոտ է փչում, Մինանա և Բրենդա) Բերեզինայի կռիվ, պոեմի ընթերցումը կոմսուհի Վ. Դ.- ի մոտ, Դանտոն, Կլեոպատրա e i suoiamanti[1], Կալոմնայի տուն, սեփական անկյուն և իր մոտ նստած մի սիրուն էակ, որ լսում է ձեզ ձմեռային գիշերին, բերանն ու աչքերը բաց, ինչպես դուք եք ինձ այժմ լսում, իմ փոքրիկ հրեշտակ... Ո՛չ, Նաստենկա, նրա, այդ վավաշոտ ցուլի ինչի՞ն է հարկավոր այն կյանքը, դեպի որը ձգտում ենք մենք: Նա կարծում է, թե դա աղքատիկ, ողորմելի կյանք է, չգուշակելով, որ երբևիցե իր համար էլ կզարկի տխուր ժամը,

1 Իտալերեն՝ և իր սիրեկանները:

երբ նա մի հատիկ այդպիսի ողորմելի օրվա համար կտա իր բոլոր ֆանտաստիկ տարիները, և այն էլ կտա ոչ ուրախության, ոչ երջանկության համար... և տխրության այն զղջումի, վշտի ժամին չի՛ էլ կամենա ընտրություն անել: Բայց առայժմ, քանի որ դեռ չի եկել այդ սպառնալի ժամանակը, նա ոչինչ չի ցանկանում, որովհետև նա բարձր է ցանկություններից, որովհետև նա ամեն ինչ ունի, որովհետև նա լիացած է, որովհետև նա ինքն է իր կյանքի ստեղծագործը և ստեղծագործում է նրան յուրաքանչյուր ժամ մի նոր քմահաճույքով: Եվ այնպես թեթև, այնպես բնականորեն է ստեղծվում այդ առասպելական ֆանտաստիկ աշխարհը: Կարծես, այդ բոլորն իրոք զգացումների գրգիռ չէ, երևակայության խաբեություն չէ, այլ իրողություն: Ինչո՞ւ այդ րոպեներին, Նաստենկա, ինչո՞ւ հոգին նեղվում է: Ինչո՞ւ այդ րոպեներին մի ինչ-որ մոգությամբ, մի ինչ-որ կամայականությամբ երազողի զարկերակն արագանում է, նրա աչքերից արտասուք է ժայթքում, նրա գունատ ու թաց այտերը շիկանում են և նրա էությունը լցվում անզսպելի բերկրությամբ: Ինչո՞ւ ամբողջ անքուն գիշերներն անցնում են որպես մի ակնթարթ՝ անսպառ ուրախության ու երջանկության մեջ, և երբ լուսամուտի վրա փայլում է նրա մռայլ սենյակն իր կասկածելի ֆանտաստիկ լույսով՝ ինչպես սովորաբար մեր Պետերբուրգում, մեր երազողը՝ հոգնած, տանջված, ընկնում է անկողին և քնում է այդպիսի հոգնեցուցիչ-քաղցր ցավը սրտում: Այո՛, Նաստենկա, հեռվից նայելով՝ խաբվում ու ակամա հավատում ես, որ իսկական, ճշմարիտ կիրքն է հուզում նրա սիրտը, հավատում ես, որ նրա անպտուղ երազների մեջ կա շոշափելին, կենդանին: Նայեցեք նրան, կարո՞ղ եք հավա-

տալ, սիրելի Նաստենկա, թե իրո՛ք նա երբեք չի ճանաչել ու տեսել այն էակին, որին այդչափ սիրել է իր ջղագար անրջանքի մեջ։ Մի՞թե նա իր սիրեցյալին տեսել է միայն իր թովիչ ցնորքների մեջ և այդ կիրքը նա լոկ երազում է տեսել. մի՞թե իրոք երբեք իրենց կյանքում այնքան տարի երկուսով ձեռք ձեռքի տված չեն անցել, ժխտելով ողջ աշխարհը և յուրաքանչյուրը միացնելով իր կյանքը, իր աշխարհը սիրածի կյանքին։ Մի՞թե նա ուշ ժամին, երբ վրա հասավ հրաժեշտը, թախծելով ու հեծծելով պառկած չի եղել նրա կրծքին, առանց լսելու հողմի ձայնը, որ պոկում ու տանում էր արտասուքները նրա սև արտևանունքներից։ Մի՞թե այդ ամենը լոկ ցնորք է եղել. և՛ այդ լքված ու վայրենի այգին՝ թախծաշունչ, մամռով պատած ուղիներով, մենացած, տխուր, որտեղ նրանք երկուսով հաճախ ման են եկել, ակնկալել, թախծել, սիրել իրար, այնքա՛ն երկար սիրել, «այնքան երկար և քնքույշ»։ Ե՛վ այդ տարօրինակ, պապենական տունը, որի մեջ նա այնքան ժամանակ ապրել է՝ մենակ, քաշված ու տրտում, ծեր, մռայլ ամուսնու հետ, մշտալուռ ու մաղձով, որ վախեցնում էր նրանց՝ մանուկների պես երկչոտներին, որոնք թախծում ու երկչոտությամբ ծածկում էին իրարից իրենց սերը։ Ինչպե՛ս տանջվում էին նրանք, ինչպե՛ս վախենում, ի՛նչ անմեղ, մաքուր էր նրանց սերը։ Եվ ի՛նչ (հասկանալի բան է, Նաստենկա) չար էին մարդիկ։ Եվ Աստվա՛ծ իմ, մի՞թե նա նրան չի հանդիպել իր հայրենի եզերքից հեռու, օտար երկնքի տակ, հարավային տաք, չնաշխարհիկ, հավերժական քաղաքում, պարահանդեսի փայլի մեջ, երաժշտության շառաչի պահին, պալատում (անպատճառ պալատում), որ ողողված էր լույսերի ծովով, մրտենիով ու վարդերով

փաթաթված այդ պատշգամբի վրա, որտեղ նա, ճանաչելով նրան, այնքան արագ հանեց դիմակն ու շշնջալով՝ «ես ազատ եմ», դողալով, հեկեկալով նրա գիրկն ընկավ և ճչալով, հիացումից, իրար սեղմվելով՝ նրանք մի վայրկյան մոռացան և՛ վիշտը, և՛ անջատումը, և՛ բոլոր տանջանքները, և՛ մռայլ տունը, և՛ ծերունուն, և՛ մռայլ այգին հեռու հայրենիքում, և՛ նստարանը, երբ վերջին կրքոտ համբույրով նա դուրս թռավ անասելի տանջանքից թմրած ձեռներից... Օ՜, համաձայնեցե՛ք, Նաստենկա, որ կթպրտաս, կշփոթվես և կշիկնես այն դպրոցականի պես, որ հարևան այգուց գողացած խնձորը նոր է կոխել գրպանը, և երբ մի բարձրահասակ, մեծ տղա, ուրախ և հանաքչի, ձեր անկոչ բարեկամը, կբանա ձեր դուռը և կգոչի, ասես բան չի պատահել՝ «Իսկ ես, բարեկամ, այս րոպեիս եկա Պավլովսկից»: Տե՛ր Աստված, ծեր կոմսը մեռավ, հասնում է անասելի բախտը. իսկ այդ միջոցին մարդիկ գալիս են Պավլովսկից:

Ես պաթետիկ կերպով լռեցի, ավարտելով իմ պաթետիկ բացականչությունները:

Հիշում եմ, որ այդ պահին ես սաստիկ ցանկացա մի կերպ հռհռալ, որովհետև արդեն զգում էի, որ իմ մեջ արթնացել է մի թշնամի դևիկ, որ արդեն կոկորդս խեղդվում է, ծնոտս դողում է և աչքերս ավելի ու ավելի թրջվում են:

Ես սպասում էի, թե Նաստենկան, որ իր խելոք աչքերը լայն բացած՝ լսում էր ինձ, կծիծաղի իր ամբողջ մանկական, անզսպելի ուրախ ծիծաղով, և արդեն զղջում էի, որ շատ հեռուն գնացի, զուր պատմեցի վաղուց սրտիս մեջ կուտակվածը, որ ես կարող էի ասել՝ գրածը կարդալու պես, որովհետև վաղուցհետե ես իմ դատավճիռը հանել էի և հիմա չկարողացա դիմանալու կարդացի, առանց

հուսալու, խոստովանում եմ, որ ինձ կհասկանան: Սակայն, զարմանալի է, Նաստենկան լռեց, մի քիչ անցած՝ ձեռս սեղմեց ու հարցրեց.

- Մի՞թե իսկապես դուք այդպես եք անցկացրել ձեր ամբողջ կյանքը:

- Ամբո՛ղջ կյանքս, Նաստենկա,- պատասխանեցի ես,- ամբողջ կյանքս և կարծեմ այդպես էլ կավարտեմ:

- Ո՛չ, այդ անկարելի է,- ասաց նա անհանգիստ,- այդ չի լինի, ապա թե ոչ՝ ես էլ իմ ամբողջ կյանքը կանցկացնեմ տատիս մոտ: Լսեցե՛ք, դուք գիտե՞ք, որ միանգամայն լավ չէ այդպես ապրելը:

- Գիտեմ, Նաստենկա, գիտեմ,- գոչեցի ես, այլևս չզսպելով իմ զգացումը:- Եվ այժմ գիտեմ ավելի, քան երբեք, որ ես իմ լավագույն տարիները զուր եմ կորցրել: Այժմ ես այդ գիտեմ. և ավելի եմ ցավ զգում այդ գիտակցությունից, որովհետև Աստված ինքն է ուղարկել ինձ համար ձեզ, իմ բարի հրեշտակին, որպեսզի ինձ այդ ասի և ապացուցի: Այժմ, երբ ես նստած եմ ձեզ մոտ ու խոսում եմ ձեզ հետ, ինձ համար նույնիսկ տարօրինակ է մտածել ապագայի մասին, որովհետև ապագայում՝ դարձյալ մենություն, դարձյալ այդ նեխած, անպետք կյանքը, և ինչի՞ մասին այլևս պիտի երազեմ, երբ արթմնի ես արդեն ձեզ մոտ այդքան երջանիկ եմ եղել: Օ՛, օրհնյալ լինեք դուք, սիրելի աղջիկ, նրա համար, որ չհրեցիք ինձ ձեզնից, առաջին իսկ անգամից, նրա համար, որ արդեն կարող եմ ասել, թե ես իմ կյանքում գոնե երկու երեկո ապրել եմ:

- Օ՛, ո՛չ, ո՛չ,- գոչեց Նաստենկան, և արցունքը փայլեց նրա աչքերի մեջ:- Ո՛չ, այլևս այդպես չի լինի. մենք այդպես չենք բաժանվի իրարից: Ի՛նչ բան է երկու երեկոն:

- Ա՛հ, Նաստենկա, Նաստենկա։ Գիտե՞ք՝ որքան երկար ժամանակով դուք ինձ հաշտեցրիք ինձ հետ։ Գիտե՞ք, որ ես այժմ այլևս ինքս իմ մասին այնպես վատ չեմ մտածելու, ինչպես մտածել եմ զանազան րոպեներ։ Գիտե՞ք, որ ես գուցե այլևս չեմ թախծելու այն մասին, թե կյանքումս հանցանք ու մեղք եմ գործել, որովհետև այդպիսի կյանքը հանցանք ու մեղք է։ Եվ մի՛ կարծեք, որ ես մի բան հնարեցի կամ ավելացրի իմ պատմության մեջ, Աստծու սիրուն, մի՛ կարծեք, Նաստենկա, որովհետև երբեմն ես ունենում եմ րոպեներ այնպիսի անձկության, այնպիսի թախիծի... որ... Որովհետև այդ րոպեներին ինձ սկսում է թվալ, որ ես բնավին ընդունակ չեմ իսկական կյանքով կյանք սկսելու, որովհետև ինձ թվում էր, թե միանգամայն կորցրել եմ իրականության զգացողությունն ու տակտը։ Որովհետև, վերջապես, ես անիծել եմ ինքս ինձ, որովհետև իմ ֆանտաստիկ գիշերներից հետո ունենում եմ արթնության սոսկալի րոպեներ։ Մինչև լսում ես, թե ինչպես շուրջդ պտտում ու որոտում է կյանքի մրրիկի մեջ մարդկային ամբոխը, մինչ լսում ես, թե ինչպես են մարդիկ ապրում արթմնի, մինչ տեսնում ես, որ նրանց համար կյանքը արգելված չէ, որ նրանց կյանքը չի անհետանա որպես երազ, որպես տեսիլ, որ նրանց կյանքը հավիտյան նորոգվում է, հավիտյան մանկանում, և նրա ոչ մի ժամը նման չէ մյուսին. այնինչ լքնության չափ միապաղաղ ու տաղտկալի է երկչոտ ֆանտազիան, ստրուկ է ստվերի, գաղափարի, ստրուկ առաջին ամպի, որ հանկարծակի սքողում է արեգակը և թախիծով ճնշում իսկական պետերբուրգյան սիրտը, որն այնքան թանկ է գնահատում իր արեգակը. և ինչ ֆանտազիա կարող է լինել անձկության մեջ։ Եվ ահա

զգում ես, որ նա, այդ անսպառ ֆանտազիան հոգնում է, սպառվում է մշտական լարվածության մեջ, որովհետև չէ՞ որ առնանում ես ու դուրս ես պրծնում քո նախկին իդեալներից: Նրանք, այդ իդեալները խորտակվում են, բեկորներ են դառնում, փոշիանում են, և ահա, եթե ուրիշ կյանք չկա, ստիպված ես լինում կյանքդ շինել այդ բեկորներից: Այնինչ հոգիդ մի ինչ-որ բան է ցանկանում ու խնդրում: Եվ երազողը զուր է իր հին ցնորքների մեջ որոնումներ անում, զուր է այդ մոխրի մեջ փնտրում գեթ որևէ կայծ, որպեսզի նորեն հրահրի իր ֆանտազիան, նորոգված կրակով ջերմացնի սառած սիրտն ու նրա մեջ ամենը, ինչ որ առաջ այնպես սիրելի էր, ինչ որ շոշափում էր նրա սիրտը, ինչ որ եռացնում էր արյունը, ինչ որ նրա աչքերից արցունք էր հոսեցնում և այդպես շքեղորեն խաբում էր: Գիտե՞ք արդյոք, Նաստենկա, մինչև ուր էի ես հասել: Գիտե՞ք արդյոք, որ ես արդեն հարկադրված էի իմ զգացողությունների միամյա հոգեհանգիստը կատարել, հոգեհանգիստն այն բանի, որ առաջ այնպես անուշ էր և որ իրապես երբեք գոյություն չէր ունեցել. որովհետև այդ տարեդարձը կատարվում է նույն անմարմին ու տխմար ցնորքների վերաբերմամբ, և ուզում էի այդ անել այն պատճառով, որ նույնիսկ այդ տխմար ցնորքները չկան, որ նրանց տեղը դնելու բան չկա. չէ՞ որ ցնորքների տեղն էլ բան պիտի դնել: Գիտե՞ք, որ ես սիրում եմ այժմ մտաբերել ու այցելել որոշ ժամկետին այն տեղերը, որտեղ երբեմն եղել եմ ինքնատեսակ երջանիկ, սիրում եմ ներկան կառուցել անվերա-դարձ՝ անցյալի նման, և հաճախ՝ որպես ստվեր, աննպատակ ու անկարիք, տխուր ու թախծալի դեգերում եմ Պետերբուրգի հետ ընկած անկյուններում ու փողոցներում:

Ի՜նչ հիշողություններ: Հիշում եմ, օրինակի համար, թե ահա այդտեղ, սրանից ուղիղ մի տարի առաջ, ուղիղ այս ժամանակ, այս իսկ ժամին, նույն այդ մայթի վրա թափառել եմ այնպես իսկ մենակ, այնպես իսկ տրտում, որպես այժմ: Եվ հիշում եմ, որ այն ժամանակ էլ երազներս թախծալի էին, և թեև առաջ էլ ավելի լավ չէր, այնուամենայնիվ զգում եմ, որ իբր թե ավելի լավ ու ավելի հանգիստ է եղել ապրելը, որ չի եղել այն սև խոհը, որ այժմ կպել է ինձ, չեն եղել մռայլ ու դաժան խայթեր, որոնք այժմ ոչ ցերեկը, ոչ գիշերը հանգիստ չեն տալիս: Եվ հարցնում եմ ինքս ինձ՝ ո՞ւր են քո ցնորքները: Եվ գլուխս շարժում եմ ու ասում՝ ինչպե՜ս արագ են թռչում տարիները: Եվ նորեն հարցնում եմ ինքս ինձ՝ ի՞նչ արիր քո տարիներին, որտե՞ղ թաղեցիր դու քո լավագույն ժամանակը: Դու ապրե՞լ ես, թե՞ ոչ: Նայիր, ասում եմ ինքս ինձ, նայիր՝ որքան ցրտում է աշխարհը: Կանցնեն դարձյալ տարիներ, և նրանց հետևից կգա մռայլ մենությունը, կգա դողդոջուն ծերությունը, ցուպը ձեռքին ու նրա հետևից՝ թախիծն ու հուսահատությունը: Կգունատվի քո ֆանտաստիկ աշխարհը, կթառամեն ու կթորշոմեն քո ցնորքները և կթափվեն որպես դեղին տերևները ծառերից... Օ՜, Նաստենկա, չէ՞ որ տխուր կլինի մնալ մեն- մենակ, մեն-մենակ միանգամայն և խղճալու էլ ոչինչ չունենալ, ոչինչ, կատարելապես ոչինչ, որովհետև այն բոլորը, ինչ որ կորցրել եմ, այդ բոլորը եղել է ոչինչ, մի տխմար կլոր զրո, ցնորք...

- Դե՜հ, այլևս մի խղճահարեցեք ինձ,- արտասանեց Նաստենկան, աչքերից հոսող արցունքը սրբելով:- Այժմ վերջացավ: Այժմ մենք կլինենք միասին, այժմ ինչ որ էլ ինձ պատահի, այլևս երբեք չենք բաժանվի իրարից: Լսեցե՜ք,

ես մի պարզ աղջիկ եմ, ես շատ քիչ եմ ուսում առել, թեև տատս ինձ համար ուսուցիչ էլ վարձել է, բայց, հավատացե՛ք, ես ձեզ հասկանում եմ, որովհետև բոլորը, ինչ որ ինձ պատմեցիք այժմ, ինքս էլ ապրել եմ արդեն, երբ տատս ինձ գնդասեղով կպցրել էր իր զգեստին: Իհարկե, ես այնպես լավ չէի կարող պատմել, ինչպես դուք պատմեցիք, ես ուսում չեմ առել,- ավելացրեց Նաստենկան համեստաբար, որովհետև տակավին զգում էր ինչ-որ հարգանք դեպի իմ պաթոսային ճառը և դեպի իմ բարձր ոճը,- բայց ես շատ ուրախ եմ, որ դուք ձեր սիրտը բոլորովին բաց արիք իմ առջև: Այժմ ես ձեզ ճանաչում եմ միանգամայն, ամբողջովին ճանաչում եմ: Եվ գիտե՞ք ինչ: Ես էլ եմ ուզում պատմել իմ պատմությունը, ամբողջը, առանց մի բան թաքցնելու, կպատմեմ, հետո դուք ինձ խորհուրդ կտաք: Դուք շատ խելոք մարդ եք, խոստանո՞ւմ եք արդյոք, որ այդ խորհուրդը կտաք ինձ:

- Ա՛հ, Նաստենկա,- պատասխանեցի ես,- թեև ես երբեք խորհրդատու չեմ եղել, մանավանդ՝ խելոք խորհրդատու, բայց այժմ տեսնում եմ, որ եթե մենք միշտ այսպես ենք ապրելու, այդ լինելու է շատ խելացի և մենք մեկմեկու տալու ենք շատ ու շատ խելոք խորհուրդներ: Դե՛հ, իմ սիրունիկ Նաստենկա, ի՞նչ խորհուրդ տամ ձեզ: Ասացեք ինձ ուղղակի. ես այժմ այնքան ուրախ եմ, երջանիկ, համարձակ ու խելոք, որ դես ու դեն չեմ ընկնի խոսքեր գտնելու համար:

- Ո՛չ, ո՛չ,- ընդհատեց Նաստենկան՝ ծիծաղելով,- ինձ հարկավոր է ոչ միայն խելոք խորհուրդ, ինձ հարկավոր է սրտաբուխ, եղբայրական խորհուրդ, այնպես, որպես թե ձեր ամբողջ կյանքում ինձ սիրել եք:

- Թող այդպես լինի, Նաստենկա, թող այդպես լինի,- գոչեցի ես սքանչացած։ - Եվ եթե ես ձեզ քսան տարի սիրած լինեի, այնուամենայնիվ չէի կարող այժմյանի պես ուժեղ սիրել։

- Տվեք ձեր ձեռը,- ասաց Նաստենկան։

- Ահա նա,- ասացի ես՝ ձեռս տալով։

- Այդպես, ուրեմն, սկսենք իմ պատմությունը։

Այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը: Կայքում կարող եք գտնել բազմաթիվ այլ անվճար գրքեր ինչպես նաև ցանկության և հնարավորության դեպքում կարող եք աջակցել մեզ օգնելով ավելի շատ գրքեր թվայնացնել:

ՆԱՍՏԵՆԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Իմ պատմության կեսն արդեն գիտեք, այսինքն գիտեք, որ ես մի պառավ տատ ունեմ։

- Եթե մյուս կեսն էլ այդպես կարճ է,- ընդհատեցի ես՝ ծիծաղելով...

- Լռե՛ք և լսե՛ք։ Ամենից առաջ մի պայման. ինձ չընդհատել, ապա թե ոչ ես կարող եմ շեղվել։ Դե՛, խելոք ականջ դրեք...

- Ես ունեմ մի պառավ տատ։ Ես նրա մոտ եմ ընկել փոքր հասակումս, որովհետև հայրս էլ, մայրս էլ մեռել էին։ Պետք է կարծել, թե տատս առաջ ավելի հարուստ է եղել, որովհետև այժմ էլ նա խոսում է իր լավագույն օրերի մասին։ Նա ինքն ինձ սովորեցրել է ֆրանսերենը, հետո ինձ համար ուսուցիչ է վարձել։ Երբ ես տասնհինգ տարեկան էի (այժմ ես տասնյոթ տարեկան եմ), ուսումս վերջացրի։ Ահա այդ ժամանակ ես չարաճճիություն արի, թե ինչ արի՝ ձեզ չեմ ասի. բավական է ասել, որ արածս մեծ բան չէր։ Բայց տատս մի առավոտ կանչեց ինձ իր մոտ և ասաց, թե որովհետև ինքը կույր է, ուստի չի կարող ինձ հսկել, և գնդասեղը վերցրեց ու իմ զգեստը կպցրեց իր զգեստին, միևնույն ժամանակ ասաց, թե այդպես մենք նստելու ենք մեր ամբողջ կյանքը, եթե, իհարկե, ես չեմ ուղղվի։ Մի խոսքով՝ առաջին օրերն անհնարին էր տատիցս հեռանալ. և՛ գործիր, և՛ կարդա, և՛ սովորիր՝ բոլորը տատիդ կպած։ Մի անգամ ես փորձեցի խորամանկություն անել և Ֆյոկլային համոզեցի իմ տեղը նստել։ Ֆյոկլան, մեր գործավարուհին է, խուլ է։ Ֆյոկլան նստեց իմ տեղը. տատս այդ ժամանակ բազկաթոռի մեջ քնեց, իսկ ես գնացի ոչ հեռու,

ընկերուհուս մոտ: Դե՛, բանը վատ վերջացավ: Տատս իմ բացակայությամբ զարթնում է քնից և ինչ-որ հարցնում, կարծելով, որ ես դեռ խելոք նստած եմ իմ տեղում: Ֆյոկլան տեսնում է, որ տատս հարց է տալիս իրեն, բայց խուլ լինելով, չի լսում, թե ինչ է հարցնում, մտածում է, մտածում է ինչ անել, գնդասեղը պոկում է, և հայդա... փախչում է...

Այստեղ Նաստենկան կանգ առավ և սկսեց ծիծաղել: Ես էլ ծիծաղեցի նրա հետ: Նա իսկույն դադարեց:

- Գիտեք, դուք իմ տատի վրա մի՛ ծիծաղեք: Ես ծիծաղում եմ նրա համար, որ ծիծաղելի է... Ի՛նչ արած, որ տատս այդպես է, այնուամենայնիվ ես նրան մի փոքր սիրում եմ: Դե ես էլ պատժվեցի. իսկույն ինձ նստեցրին իմ տեղը և հը՛ը, այլևս տեղիցդ չշարժվես:

- Բայց ես,- շարունակեց Նաստենկան,- դեռ մոռացա ասել ձեզ, որ մենք, այսինքն՝ տատս տուն ուներ, այսինքն՝ մի փոքրիկ փայտաշեն տնակ՝ ընդամենը երեք լուսամուտով, և այնքան հին, որքան տատս, իսկ վերի հարկում կար մի սենյակ: Եվ ահա այդ սենյակը տեղափոխվեց մի նոր կենող...

- Կնշանակի մի հին կենո՞ղ էլ եղել էր,- նկատեցի ես անցողակի:

- Դե, իհարկե, եղել էր,- պատասխանեց Նաստենկան,- և գիտեր ավելի լավ լռել, քան դուք: Ճիշտն եմ ասում, նա հազիվ էր իր լեզուն պտտեցնում: Դա մի ծերուկ էր՝ չոր, համր, կույր, կաղ, այնպես որ, վերջապես չկարողացավ ապրել ու մեռավ: Այնուհետև հարկավոր եղավ գտնել մի նոր կենող, որովհետև մենք առանց կենողի չէինք կարող ապրել. դա և տատիս թոշակն էր մեր ամբողջ եկամուտը: Շակառակի պես, նոր կենողը երիտասարդ մարդ էր,

ոչ տեղացի, այլ եկվոր: Որովհետև նա վարձագնի մասին չսակարկեց, տատս թողեց, որ նա գա, իսկ հետո հարցրեց. «Նաստենկա, մեր նոր կենողը երիտասա՞րդ է, թե ոչ: Ես չկամեցա ստել, ասացի. «Տատ, չի կարելի ասել, որ շատ էլ երիտասարդ է, բայց այնպես, ծերունի էլ չի»:

- Իսկ արտաքինը հաճելի՞ է,- հարցրեց տատս:

Ես դարձյալ ստել չկամեցա և ասացի. «Այո՛, տատ, արտաքինը հաճելի է»: Իսկ տատս ասաց. «Ա՛խ, պատի՛ժ, պատի՛ժ: Թոռնիկս, ես այդ նրա համար եմ ասում, որ դու խելքդ չտաս նրան: Է՛հ, դար, դար, տեսեք, այդպիսի չնչին մի կենող, նա էլ հաճելի արտաքին ունի, այդպես չէր հին ժամանակ»:

Առհասարակ տատս հենց մի գլուխ այդ «հնի» մասին էր երազում: Հին ժամանակ ինքն էլ երիտասարդ է եղել, հին ժամանակ արեգակն էլ ավելի տաք է եղել, հին ժամանակ սերն էլ այժմյան պես շուտ չէր թթվում. բոլորը հին ժամանակ: Եվ ահա ես նստած մտածում եմ. այդ ինչո՞ւ տատս շարունակ ինձ խելքի է բերում, հարց ու փորձ է անում, լա՞վ մարդ է արդյոք, երիտասա՞րդ է նոր կենողը: Մտածեցի, մտածեցի և էլի սկսեցի գուլպա գործել, կշկուռներ համրել և հետո բոլորովին մոռացա:

Մի անգամ մեզ մոտ է գալիս մեր նոր կենողը՝ ասելու, որ խոստացել ենք նրա սենյակը պաստառով ծածկել: Խոսք խոսքի հետևեց, դե՛, տատս էլ շատախոս մեկն է, ասում է. «Գնա, Նաստենկա, իմ ննջարանը և համրիչը բեր»: Ես իսկույն ոտքի թռա, ամբողջովին կարմրելով՝ չգիտեմ ինչից ու մոռացա, որ զգեստս կապկպած է տատիս զգեստին; Դե՛, իհարկե, կարող էի կամացուկ պոկել, այնպես որ կենողը չտեսներ, բայց ոչ, այնպես թռա, որ տա-

տիս բազկաթոռը շուռ եկավ: Zենց որ տեսա՝ կենողն ամեն բան իմացավ, կարմրեցի, տեղն ու տեղս ցցված մնացի և հանկարծ լաց եղա. այնպես ամոթալի ու դառն էր այդ րոպեին, որ պատրաստ էի գետինը մտնել: Տատս գոռում է. «Այդ ի՞նչ արիր»: Իսկ ես ավելի եմ շփոթվում... Կենողը տեսավ, որ ես ամաչում եմ, իսկույն գլուխ տվեց ու հեռացավ:

Այն օրից՝ հենց որ դռների հետևից մի աղմուկ էի լսում, մեռածի նման էի: Կարծելով, որ կենողը գալիս է, գնդասեղը կամացուկ դուրս էի բերում: Բայց նա չէր գալիս ու չէր գալիս: Անցավ երկու շաբաթ, մի օր կենողը Ֆոկլային ուղարկում է ասելու, թե ինքը շատ ֆրանսերեն գրքեր ունի, թե բոլորն էլ լավ գրքեր են, այնպես որ կարելի է կարդալ, արդյոք տատս կկամենա՞, որ ես իր համար կարդամ, որպեսզի չտխրի: Տատս շնորհակալությամբ համաձայնեց, միայն երկար ու բարակ հարցրեց՝ արդյոք գրքերը բարոյական են, թե ոչ, «որովհետև եթե անբարոյական են, այն ժամանակ դու, Նաստենկա, չպիտի կարդաս, վատ բաներ կսովորես»:

- Ի՞նչ բաներ կսովորեմ, տատ: Ի՞նչ է գրված գրքերի մեջ:

- Նրանց մեջ գրված է,- ասում է,- թե ինչպես երիտասարդները գայթակղում են բարեբարո աղջիկներին, ինչպես նրանք ամուսնանալու պատրվակով փախցնում են նրանց ծնողների տնից, թե ինչպես հետո այդ խեղճ աղջիկներին ձգում են ճակատագրի հաճույքին, և սրանք կործանվում են ողբալի կերպով: Ես,- ասում է տատս,- շատ եմ այդպիսի գրքեր կարդացել և բոլորը,- ասում է,- այնպես գեղեցիկ է նկարագրված, որ գիշերները նստում ես ու թաքուն կարդում: Իսկ դու, Նաստենկա,- ասում է,- տես, չկարդաս այդ գրքերը: Այդ ի՞նչ գրքեր է նա ուղարկել:

- Բոլորը Վալտեր Սկոտտի վեպերն են, տատ։

- Վալտեր Սկոտտի վեպե՞րը։ Թող տեսնենք, չլինի՞ թե այդտեղ սիլիբիլիություններ կան։ Լավ մտիկ արա, արդյոք նրանց մեջ մի սիրային նամակ չի՞ դրել։

- Ոչ,- ասում եմ,- տատ, նամակ չկա։

- Դու կազմի տակը տես, այդ ավազակները երբեմն կազմի տակ են խոթում...

- Ոչ, տատ, կազմի տակ էլ ոչինչ չկա։

- Դե՛, լավ։

- Եվ ահա մենք սկսեցինք Վալտեր Սկոտտ կարդալու մի ամսվա մեջ կեսն անցանք։ Հետո նա էլի ու էլի գրքեր ուղարկեց։ Պուշկինին ուղարկեց, այնպես որ, վերջապես, ես առանց գրքի մնալ չէի կարող և դադարեցի մտածել չինական իշխանի հետ ամուսնանալու մասին։

Բանն այդպես էր, երբ մի անգամ այնպես պատահեց, որ ես հանդիպեցի մեր կենողին սանդուղքի վրա։ Տատս՝ չգիտեմ ինչ բանի համար, ինձ մի տեղ էր ուղարկել։ Նա կանգ առավ, ես կարմրեցի, նա էլ կարմրեց, բայց ծիծաղեց, բարևեց, տատիս առողջության մասին հարցրեց և ասաց. «Կարդացի՞ք գրքերս»։ Ես պատասխանեցի՝ «Կարդացի»։ Ասաց. «Ո՞րը ձեզ դուր եկավ ավելի»։ Ես ասացի. «Այվենհոն[1] և Պուշկինն ամենից ավելի դուր եկան»։

Այս անգամ սրանով էլ վերջացավ։

Մի շաբաթ հետո ես էլի հանդիպեցի նրան սանդուղքի վրա։ Այս անգամ տատս ինձ չէր ուղարկել, ես ինքս էի դուրս եկել՝ չգիտեմ ինչ բանի համար։ Երրորդ ժամն էր, իսկ կենողն էլ սովորաբար հենց այդ ժամին էր տուն վերադառնում։

1 Վ. Սկոտտի վեպի վերնագիրն է։

- Բարև,- ասում է նա։

Ես էլ նրան ասում եմ.

- Բարև։

- Շը՛ը,- ասում է,- ձեզ համար ծանձրալի չէ՞ ամբողջ օրը տատի հետ միասին նստելը։

Շենց որ նա այդ հարցրեց, ես, չգիտեմ ինչու, կարմրեցի, ամոթահարվեցի և դարձյալ վիրավորվեցի, երևի այն պատճառով, որ արդեն ուրիշներն էլ սկսել էին այդ մասին հարցնել ինձ։ Ես ուզում էի այդ հարցին չպատասխանել և հեռանալ, բայց ուժ չունեցա։

- Լսեցեք,- ասում է,- դուք բարի աղջիկ եք։ Ներեցեք, որ ես ձեզ հետ այսպես եմ խոսում, բայց, հավատացնում եմ ձեզ, ես ձեր տատից ավելի եմ ձեզ բարի ցանկանում։ Դուք ընկերուհիներ չունե՞ք, որոնց մոտ կարողանայիք հյուր գնալ։

Ես ասացի թե՝ ոչ մեկը, եթե մեկը կար՝ Մաշինկան, նա էլ Պսկով գնաց։

- Լսեցեք,- ասում է,- ուզո՞ւմ եք ինձ հետ թատրոն գնալ։

- Թատրո՞ն։ Իսկ տա՞տս։

- Դուք կարող եք,- ասում է,- տատից թաքուն գնալ։

- Ո՛չ,- ասում եմ,- ես իմ տատին խաբել չեմ ուզում։ Գնաք բարով։

- Մնաք բարով,- ասում է, էլ ուրիշ ոչինչ չի ասում։ Միայն ճաշից հետո եկավ մեզ մոտ։ Նստեց, տատիս հետ երկար խոսեց, հարց ու փորձ արավ, թե որևէ տեղ գնո՞ւմ է, ունի՞ ծանոթներ և հանկարծ ասաց.

- Այսօր ես օպերայի օթյակ եմ վերցրել. «Սևիլի սափրիչն» են խաղում, ծանոթներս ուզում էին ինձ հետ գնալ,

բայց հետո հրաժարվեցին, տոմսակը մնաց։

- «Սևիլի սափրի՞չ»,- գոչեց տատս,- դա ա՞յն սափրիչն է, որ հին ժամանակ ներկայացնում էին։

- Այո,- ասում է,- նույն սափրիչն է։

Ասում է և ինձ վրա է նայում։ Իսկ ես արդեն ամեն բան հասկացել եմ, կարմրել եմ և սիրտս սպասելուց թռչկոտում է։

- Ինչպե՛ս չգիտեմ,- ասում է տատս,- ինչպե՛ս չգիտեմ։ Ես ինքս հին ժամանակ մի տնային թատրոնում Ռոզինա եմ խաղացել։

- Ուրեմն կկամենա՞ք այսօր գնալ,- ասաց կենողը։- Տոմսակս զուր տեղը կորչում է։

- Ինչո՞ւ չէ, գնանք,- ասում է տատս,- ինչո՞ւ չգնալ։ Նաստենկաս դեռ թատրոն չի տեսել։

Աստված իմ, ինչ ուրախություն։ Իսկույն և՛եթ զուգվեցինք ու գնացինք։ Տատս՝ թեև կույր, այնուամենայնիվ փափագեց երաժշտություն լսել, բացի դրանից, նա բարի պառավիկ է, ավելի ինձ զվարճացնելու համար գնաց, քան իր համար, թե չէ մենք ինքներս երբեք չէինք գնա։ Թե ինչ տպավորություն ստացա «Սևիլի սափրիչից», չեմ ասի, միայն ամբողջ այդ երեկո մեր կենողն այնպես լավ էր նայում ինձ վրա, այնպես լավ էր խոսում, որ ես իսկույն տեսա, որ առավոտյան նա ինձ փորձել էր ուզում, առաջարկելով, որ ես թատրոն մենակ գնամ նրա հետ։ Ինչ ուրախություն էր։ Տուն վերադառնալով, ես պառկեցի քնելու այնպես հպարտ, այնպես հպարտ, սիրտս այնպես էր բաբախում, որ մի թեթև տենդ ունեցա և ամբողջ գիշեր «Սևիլի սափրիչի» մասին էի զառանցում։

Ես կարծում էի, որ դրանից հետո նա պիտի գա մեզ

մոտ ավելի հաճախ. չպատահեց: Նա գրեթե բոլորովին դադարեց: Պատահում էր, ամիսը մի անգամ գալիս էր, այն էլ միայն նրա համար, որ թատրոն հրավիրի: Մի-երկու անգամ էլ գնացինք: Բայց ես գոհ չէի դրանով: Ես տեսնում էի՝ նա ուղղակի ինձ խղճում է, որ տատս ինձ օր չի տալիս, դա էր միայն, ուրիշ ոչինչ: Քանի գնաց քեֆս փոխվեց, ոչ տանն եմ կարողանում նստել, ոչ կարդալ եմ կարողանում, ոչ աշխատանքս աշխատանքի նման է, երբեմն ծիծաղում եմ և տատիս հակառակ մի բան եմ անում, երբեմն էլ ուղղակի լաց եմ լինում: Վերջապես, ես նիհարեցի ու քիչ մնաց հիվանդանայի: Օպերայի սեզոնն անցավ, և կենողը բոլորովին դադարեց մեզ այցելել, իսկ երբ մենք հանդիպում էինք, իհարկե, դարձյալ նույն սանդուղքի վրա- նա այնպես լուռ բարևում էր, այնպես լուրջ, որ կարծես խոսել անգամ չի ուզում ու վար է իջնում, իսկ ես դեռ կանգնած եմ սանդուղքի կիսում, կեռասի պես կարմրած, որովհետև նրան հանդիպելիս արյունս սկսում էր խփել:

Այժմ իսկույն կվերջացնեմ: Սրանից ուղիղ մի տարի առաջ, մայիս ամսին, կենողը գալիս է մեզ մոտ ու տատիս ասում է, թե իր գործն այստեղ բոլորովին վերջացրել է և թե պետք է էլի մի տարով Մոսկվա գնա: Ես հենց որ այս լսեցի, գունատվեցի և ընկա աթոռի վրա մեռածի պես: Տատս ոչինչ չնկատեց, իսկ նա հայտարարելով, թե գնում է մեզնից, գլուխ տվեց ու հեռացավ:

Ի՞նչ պիտի անեի: Մտածեցի-մտածեցի, տխրեցի-տխրեցի, և վերջապես վճռեցի: Վաղը նա գնում է, իսկ ես վճռեցի ամեն ինչ պատրաստել երեկոյան, երբ տատս գնում է քնելու: Այդպես էլ եղավ: Ես մի կապոցի մեջ հավաքեցի ունեցած-չունեցած զգեստս ու ճերմակեղենս և

կապոցը վերցրած ոչ կենդանի, ոչ մեռած, գնացի մեր կենողի սենյակը: Կարծում եմ՝ մի ամբողջ ժամ բարձրանում էի սանդուղքով: Երբ դուռը բաց արի, նա՝ ինձ տեսնելով, ճչաց: Նա կարծեց, որ ես ուրվական եմ, և շտապեց ինձ ջուր մատուցանել, որովհետև ես հազիվ էի կարողանում ոտի վրա մնալ: Սիրտս այնպես էր բաբախում, որ գլուխս ցավում էր, և ուղեղս մթնել էր: Իսկ երբ ուշքի եկա, նախ և առաջ կապոցս դրեցի նրա անկողնակալի վրա, ինքս էլ նստեցի նրա մոտ, երեսս ձեռներովս ծածկեցի և արտասվեցի հեղեղի պես: Նա կարծեմ ամեն ինչ իսկույն հասկացավ և կանգնած էր իմ առջև գունատ և այնպես տխուր էր նայում ինձ վրա, որ սիրտս էր մորմոքվում:

- Լսեցեք,- սկսեց նա,- լսեցեք, Նաստենկա, ես ոչինչ չեմ կարող, ես աղքատ եմ, ես առայժմ ոչինչ չունեմ, նույնիսկ՝ մի օրինավոր պաշտոն: Ինչպե՞ս կարող ենք մենք ապրել, եթե ես ամուսնանամ էլ ձեզ հետ:

Մենք երկար խոսեցինք, բայց ես, վերջապես, ջղագար ասացի, թե տատիս մոտ ապրել չեմ կարող, թե կփախչեմ նրանից, չեմ ուզում, որ ինձ գնդասեղով կպցնեն նրան և թե, նա ուզենա-չուզենա՝ պիտի իր հետ գնամ Մոսկվա, որովհետև առանց իրեն ապրել չեմ կարող: Ե՛վ ամոթը, և՛ սերը, և՛ հպարտությունը՝ ամեն ինչ խոսում էր իմ մեջ միանգամից, և ես՝ համարյա ջղաձգության մեջ՝ ընկա անկողնի վրա: Ես այնպես էի վախենում մերժումից...

Մի քանի րոպե նա նստած էր լուռ, հետո ոտքի ելավ, մոտեցավ ինձ ձեռս բռնեց:

- Լսեցեք, իմ բարի, իմ սիրելի Նաստենկա,- սկսեց նա նույնպես արտասվելով,- լսեցեք: Երդվում եմ, որ եթե երբևէ ես հնարավորություն ունենամ ամուսնանալու, ան-

շուշտ դուք կլինեք իմ երջանկությունը, հավատացնում եմ, այժմ միայն և միայն դուք կարող եք ինձ երջանկություն տալ: Լսեցեք, ես գնում եմ Մոսկվա, այնտեղ կմնամ մի տարի: Ես հուսով եմ՝ գործերս կարգադրել: Երբ վերադառնամ, երդվում եմ ձեզ, մենք բախտավոր կլինենք, եթե միայն չեք դադարի ինձ սիրել: Իսկ այժմ անկարելի է, ես չեմ կարող, ես չունեմ իրավունք թեկուզ մի բան խոստանալու: Բայց, կրկնում եմ, եթե մի տարուց հետո այդ չի լինի, գոնե երբևէ անպատճառ կլինի, իհարկե, այն դեպքում միայն, եթե դուք մի ուրիշին չեք գերադասի ինձնից, որովհետև որևէ խոստումով ձեզ կաշկանդել ես չեմ կարող և չեմ համարձակվի:

Ահա թե ինչ ասաց նա ինձ և մյուս օրը գնաց: Որոշված էր այդ մասին ոչ մի խոսք չասել տատիս: Նա այդպես կամեցավ: Դե, այժմ իմ պատմությունը համարյա թե վերջացավ: Ուղիղ մի տարի է անցել: Նա եկել է, նա արդեն երեք օր է՝ այստեղ է, և...

- Եվ ի՞նչ,- գոչեցի ես անհամբեր՝ վերջը լսելու:

- Եվ մինչև այժմ չի երևացել,- պատասխանեց Նաստենկան, կարծես, ուժերը ժողովելով,- ոչ լուր ունեմ, ոչ տեղեկություն...

Այստեղ Նաստենկան կանգ առավ, լռեց մի փոքր, գլուխը թեքեց և հանկարծ, երեսը ձեռներով ծածկելով, սկսեց հեկեկալ այնպես, որ սիրտս տակնուվրա եղավ այդ հեկեկանքից:

Ես բնավ չէի սպասում այդպիսի վերջավորություն:

- Նաստենկա,- սկսեցի ես անվստահ և փաղաքուշ ձայնով,- Նաստենկա, ի սեր Աստծու, լաց մի լինեք: Ի՞նչ գիտեք, կարելի է նա դեռ չի եկել...

- Այստեղ է, այստեղ է,- հարեց Նաստենկան:- Նա այստեղ է, ես այդ գիտեմ: Մենք դեռ այն ժամանակ, այն երեկո, նրա գնալու նախընթաց օրը, պայման էինք կնքել: Երբ մենք ամեն բան ասացինք, ինչ որ ես ձեզ պատմեցի, և պայմանավորվեցինք, մենք եկանք այստեղ զբոսնելու: Տասը ժամն էր, մենք նստած էինք այս նստարանի վրա. ես այլևս չէի լալիս, ինձ համար քաղցր էր լսել նրա ասածները... Նա ասաց, թե վերադառնալուց հետո նույն ժամին կգա մեզ մոտ, և եթե ես չեմ հրաժարվել նրանից, ամեն ինչ կասենք տատիս: Այժմ նա վերադարձել է, ես այդ գիտեմ, և չկա, չկա...

Եվ նա նորեն հեկեկաց:

- Աստվա՛ծ իմ, մի՞թե չի կարելի որևէ կերպ օգնել ձեր վշտին,- գոչեցի ես, վեր թռչելով նստարանից՝ կատարյալ հուսահատության մեջ:- Ասացեք, Նաստենկա, արդյոք կարո՞ղ եմ ինքս գնալ նրա մոտ:

- Մի՞թե այդ կարելի է,- ասաց նա, գլուխը հանկարծ բարձրացնելով:

- Ո՛չ, իհարկե ո՛չ,- նկատեցի ես, միտքս փոխելով: Բայց ահա ինչ. նամակ գրեցեք:

- Ո՛չ, այդ անկարելի է, այդ չի կարելի,- պատասխանեց նա դրականորեն, գլուխն արդեն քարշ արած և ինձ չնայելով:

- Ինչո՞ւ չի կարելի: Ինչո՞ւ համար չի կարելի,- շարունակեցի ես, կառչելով իմ գաղափարին:- Բայց, գիտե՞ք, Նաստենկա, ինչ նամակ: Նամակ էլ կա, նամակ էլ և... Ա՛հ, Նաստենկա, այդպես է, հավատացեք ինձ, հավատացեք: Ես ձեզ վատ խորհուրդ չեմ տա: Այդ բոլորը կարելի է կարգադրել: Դուք ինքներդ եք առաջին քայլն արել. ինչո՞ւ այժմ...

- Չի՛ կարելի, չի՛ կարելի: Դուրս կգա, որ ես փաթաթվում եմ նրա վզին...

- Ա՜հ, իմ բարի Նաստենկա,- ընդհատեցի ես, ժպիտս չթաքցնելով,- ո՛չ և ո՛չ, վերջապես դուք ունեք իրավունք, որովհետև նա ձեզ խոստացել է: Բացի դրանից, ամեն բանից երևում է, որ նա նրբազգաց մարդ է, որ նա լավ է վարվել,- շարունակեցի ես, ավելի ու ավելի հիանալով սեփական պատճառաբանությամբ ու համոզումներով:- Նա ինչպե՞ս է վարվել: Նա իրեն կաշկանդել է խոստումով: Նա ասել է, որ բացի ձեզնից ոչ ոքի հետ չպիտի ամուսնանա, իսկ ձեզ տվել է ազատություն՝ թեկուզ այս ժամին հրաժարվել... Այս դեպքում դուք կարող եք առաջին քայլն անել, դուք ունեք իրավունք, դուք առավելություն ունեք, թեկուզ, օրինակի համար, եթե կամենանք, ազատել նրան իր տված խոսքից...

- Դուք ինչպե՞ս կգրեիք, ասացեք:

- Ի՞նչը:

- Այդ նամակը, էլի:

- Ես ահա թե ինչպես կգրեի.

«Ողորմած տեր...»

- Այդ անպատճառ այդպե՞ս է հարկավոր՝ ողորմած տե՞ր...

- Անպատճառ: Բայց ինչո՞ւ չէ: Ես կարծում եմ...

- Դե՛, դե՛, հետո՞...

«Ողորմած տեր:

Ներեցեք, որ ես»: Սակայն ոչ, ոչ մի ներողություն հարկավոր չէ: Այստեղ ինքը փաստն ամեն ինչ արդարացնում է: Գրեցեք պարզ.

«Ես գրում եմ ձեզ: Ներեցեք ինձ իմ անհամբերութ-

յունը, բայց ես ամբողջ տարի երջանիկ եմ եղել իմ հույսով. մեղավո՞ր եմ ես, որ այժմ չեմ կարողանում մի օր էլ կասկածին դիմանալ: Այժմ, երբ դուք արդեն եկել եք, կարելի է՝ դուք արդեն փոխել եք ձեր մտադրությունը: Այն ժամանակ այս նամակը ձեզ կասի, որ ես չեմ տրտնջում և ձեզ չեմ մեղադրում: Ես ձեզ չեմ մեղադրում նրա համար, որ ձեր սրտի տերը չեմ... Ինչ արած, այդպես է իմ ճակատագիրը:

Դուք ազնիվ մարդ եք: Դուք չեք ժպտա ու չեք բարկանա իմ անհամբեր տողերի վրա: Մի՛ մոռանաք, որ նրանց գրողը մի խեղճ աղջիկ է, որ նա մենակ է, որ չկա մեկը նրան ո՛չ սովորեցնելու, ո՛չ խորհուրդ տալու համար, և որ նա երբեք չի կարողացել իր սրտին տիրանալ: Բայց, ներեցեք ինձ, որ իմ սրտի մեջ մի վայրկյան սպրդեց կասկած: Դուք ընդունակ չեք մինչև անգամ մտքով վիրավորել մեկին, որն այնպես սիրել ու սիրում է ձեզ»:

- Այո՛, այո՛, այդ իսկ և իսկ այնպես է, ինչպես ես մտածել եմ,- գոչեց Նաստենկան, և ուրախությունը փայլեց նրա աչքերի մեջ: Օ՛, դուք փարատեցիք իմ կասկածները, ձեզ ինքն Աստված է ուղարկել ինձ համար: Շնորհակալ եմ, շնորհակալ եմ ձեզնից:

- Ինչո՞ւ համար: Նրա համար, որ ինձ Աստվա՞ծ է ուղարկել,- ասացի ես, հիացմամբ նայելով նրա ուրախ դեմքին:

- Այո, թեկուզ դրա համար:

- Ա՛խ, Նաստենկա: Չէ՞ որ մենք ոմանց շնորհակալություն ենք հայտնում նրա համար, որ նրանք ապրում են մեզ հետ միասին: Ես ձեզ շնորհակալություն եմ հայտնում նրա համար, որ դուք հանդիպեցիք ինձ, նրա համար, որ

հավիտյան պիտի հիշեմ ձեզ:

- Դե՛, բավական է, բավական է: Իսկ այժմ ահա ինչ, լսեցեք. այն ժամանակ պայմանավորված էինք, որ նա եկավ թե չէ, իսկույն իր մասին կտեղեկացնի ինձ, մի նամակ թողնելով մի տեղ, իմ բարեկամների, բարի ու հասարակ մարդկանց մոտ, որոնք այդ մասին ոչինչ չգիտեն, կամ, եթե հնարավոր չլինի նամակ գրել ինձ, որովհետև միշտ էլ չի կարելի ամեն բան պատմել նամակում, այն ժամանակ նա, հենց նույն օրը, որ եկավ, ուղիղ տասը ժամին կգա այստեղ, ուր և որոշել էինք հանդիպել: Նրա գալու մասին ես արդեն գիտեմ, բայց ահա երրորդ օրն է՝ ոչ նամակ կա, ոչ էլինքը: Առավոտներն ինձ համար անհնարին է տատիցս հեռանալ: Վաղը տվեք ինքներդ իմ նամակն այն բարի մարդկանց, որոնց մասին ասացի, նրանք արդեն կուղարկեն, իսկ եթե պատասխան կլինի, ինքներդ երեկոյան տասը ժամին կբերեք ինձ:

- Բայց նամակը, նամակը: Չէ՞ որ նախ և առաջ պետք է նամակ գրել: Գուցե այդ բոլորը պետք է վաղը չէ մյո՞ւս օրը լինի:

- Նամակը...- ասաց Նաստենկան, մի փոքր շփոթվելով,- նամակը... բայց...

Նա չավարտեց խոսքը: Սկզբում նա իր երեսիկը դարձրեց ինձնից. կարմրեց վարդի պես և հանկարծ ես իմ ձեռքում զգացի նրա նամակը, որ ըստ երևույթին վաղուց գրված է եղել, բոլորովին պատրաստ և փակցված: Ինչ-որ ծանոթ, սիրելի, գեղեցիկ հուշ անցավ իմ գլխով:

- Ro-Ro, si, si, na-na,- սկսեցի ես:

- Rosina,- երգեցինք մենք երկուսով, ես քիչ էր մնում, որ գրկեի նրան հրճվանքից. նա կարմրել էր, որչափ կա-

րող էր, ծիծաղելով արցունքների միջից, որոնք որպես մարգարիտներ դողում էին նրա սև արտևանունքի վրա։

- Դե՛, բավական է, բավական է, գնացեք բարով,- ասաց նա արագ-արագ։- Ահա նամակը, ահա և հասցեն, ուր պիտի տանեք այն։ Գնաք բարով։ Ցտեսություն։ Մինչև վաղը։

Նա ամուր սեղմեց իմ երկու ձեռները, գլուխ տվեց և նետի պես սլացավ դեպի իր նրբանցքը։ Ես երկար ժամանակ կանգնած էի նույն տեղում, աչքերով ուղեկցելով նրան։

- Մինչև վաղը։ Մինչև վաղը,- անցավ իմ գլխով, երբ նա անհետացավ իմ աչքից։

ԵՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Այսօր օրը մռայլ էր, անձրևային, անլույս, ինչպես իմ ապագա ծերությունը: Ինձ նեղում են այնպիսի տարօրինակ մտքեր, այնպիսի մթին զգացողություններ, այնպիսի ինձ համար տակավին ոչ պարզ խնդիրներ են խռնվում իմ գլխում, որ ոչ ուժ ունեմ, ոչ ցանկություն նրանց վճռելու: Եվ ես չեմ, որ պիտի վճռեմ նրանց:

Այսօր մենք չենք տեսնվելու: Երեկ, մեր հրաժեշտի պահին, ամպերն սկսեցին երկինքն սքողել, և մառախուղ բարձրացավ: Ես ասացի, թե վաղը վատ եղանակ է լինելու: Նա չպատասխանեց, նա չկամեցավ ինքն իր դեմ խոսել. նրա համար այդ օրը և՛ լուսավոր է, և՛ պայծառ, և ոչ մի թուխպ չի վարագուրի նրա երջանկությունը:

- Քանի որ անձրև է լինելու, մենք չենք տեսնվի,- ասաց նա,- ես չեմ գա:

Ես կարծում էի, որ նա անձրևը չնկատեց անգամ, այնինչ՝ չեկավ:

Երեկ մեր երրորդ տեսակցությունն էր, մեր երրորդ սպիտակ գիշերը...

Սակայն որքա՜ն ուրախությունն ու երջանկությունը գեղեցկացնում են մարդուն: Ինչպե՜ս մարդու սիրտը եռում է սիրով: Թվում է, որ ուզում ես ամբողջ սիրտդ թափել մի ուրիշ սրտի մեջ, ուզում ես, որ ամեն ինչ ուրախ լինի, ամեն ինչ ծիծաղի: Եվ որքա՜ն վարակիչ է այդ ուրախությունը: Երեկ նրա խոսքերի մեջ որքա՜ն խանդաղանք կար, նրա սրտի մեջ՝ որքա՜ն բարություն... Ինչպե՜ս էր նա ինձ փայփայում ու փաղաքշում, ինչպե՜ս էր խրախուսում ու շոյում իմ սիրտը: Օ՜հ, որքա՜ն կոկետություն երջան-

կությունից։ Իսկ ես...

Իսկ ես այդ բոլորն ընդունում էի զուտ ոսկու տեղ, ես կարծում էի, որ նա...

Բայց, Աստված իմ, ինչպե՞ս ես կարողացա այդպես կարծել։ Ինչպե՜ս կարողացա լինել այդչափ կույր, երբ արդեն ամեն ինչ վերցրել էր մի ուրիշը, ամենը, որ իմը չէ, երբ, վերջապես, այդ նույն փաղաքշանքը, նրա հոգացողությունը, նրա սերը... Այո, սերը դեպի ինձ ուրիշ ոչինչ էր, եթե ոչ շուտով այդ ուրիշին տեսնելու ուրախությունը և իր ուրախությունը ինձ ևս պատվաստելու ցանկությունը...

Երբ նա չեկավ, երբ մենք զուր սպասեցինք, Նաստենկան մռայլվեց։ Նա դառավ վհատ և երկչոտ։ Նրա բոլոր շարժումները, բոլոր խոսքերն այլևս այնքան թեթև, այնքան կայտառ, այնքան ուրախ չէին։ Եվ, տարօրինակ բան. նա կրկնապատկել էր իր ուշադրությունը դեպի ինձ, կարծես բնազդաբար կամենալով ինձ վրա չթափել այն, ինչ որ իր համար էր ցանկանում, ինչի համար ինքը վախենում էր, որ չպիտի իրագործվի։ Իմ Նաստենկան այնքան լքվեց, այնքան երկնչեց, որ կարծեմ վերջապես հասկացավ, թե ես սիրում եմ իրեն, և խղճաց իմ սերը։ Այդպես է. երբ մենք դժբախտ ենք, ուրիշների դժբախտությունն ավելի զորեղ ենք զգում, զգացումը չի ջարդվում, այլ կենտրոնանում է...

Ես եկա նրա մոտ լի սրտով, և հազիվհազ կարողացա սպասել մինչև նրա գալը։ Ես չնախազգացի այն, ինչ որ պիտի զգայի այժմ, չնախազգացի, որ այդ բոլորն այնպես չի վերջանալու։ Նա փայլում էր ուրախությունից, նա պատասխանի էր սպասում։ Պատասխանը նա էր, Նաստենկայի սպասածը։ Նա պիտի գար, վազելով գար Նաստենկայի կոչին։ Նաստենկան ինձնից մի ժամով առաջ եկավ։

Սկզբում նա ամեն բանի վրա ծիծաղում էր, ծիծաղում էր իմ խոսքերի վրա: Ես ուզեցի խոսել ու լռեցի:

- Գիտե՞ք, արդյոք, ինչու եմ այսպես ուրախ,- ասաց նա,- ինչու եմ ուրախ ձեզ վրա նայելով: Գիտե՞ք, ինչու եմ այսօր ձեզ սիրում:

- Ինչո՞ւ,- հարցրի ես, և սիրտս սկսեց թրթռալ:

- Ես նրա համար եմ սիրում ձեզ, որ դուք ինձ վրա չսիրահարվեցիք: Չէ՞ որ մի ուրիշը ձեր տեղը կսկսեր անհանգստացնել, ձանձրացնել, ախ ու վախ կքաշեր, կհիվանդանար, իսկ դուք այնքա՛ն սիրելի եք, այնքա՛ն...

Այստեղ նա այնպես սեղմեց իմ ձեռը, որ ես քիչ մնաց գոռամ: Նա սկսեց ծիծաղել:

- Աստվա՛ծ իմ, ի՛նչ հրաշալի բարեկամ եք դուք,- սկսեց նա մի որոպե անց՝ շատ լուրջ եղանակով:- Ձեզ Աստված է ուղարկել ինձ համար: Ի՞նչ կարող էր ինձ պատահել, եթե այժմ դուք ինձ հետ չլինեիք: Ա՛հ, ինչ անշահախնդիր մարդ եք դուք: Ինչ լավ սիրում եք ինձ: Երբ ես ամուսնանամ, մենք շատ լավ բարեկամներ կլինենք, դուք ինձ համար եղբորից ավելի կլինեք: Ես ձեզ կսիրեմ գրեթե այնպես, ինչպես նրան եմ սիրում...

Այդ վայրկյանին ես զգացի սարսափելի տխրություն, սակայն հոգուս մեջ ծիծաղի նման մի բան շարժվեց:

- Դուք վախենում եք,- ասացի ես,- դուք կարծում եք, թե նա չի գալու:

- Տերը ձեզ հետ,- պատասխանեց նա,- եթե ես պակաս երջանիկ լինեի, կարծեմ կարտասվեի ձեր թերահավատությունից, ձեր կշտամբանքներից: Սակայն դուք ինձ միտք ներշնչեցիք և ինձ տվեցիք երկարատև մտածում, բայց ես հետո կմտածեմ, իսկ այժմ խոստովանում եմ ձեզ,

որ ճշմարիտն եք ասում: Այո՛: Ես ինքս ինձ կարծես կորցրել եմ, ես կարծես ամբողջովին սպասողության մեջ եմ և ամեն ինչ մի տեսակ թեթևորեն եմ զգում: Բայց բավական է, թողնենք զգացումների մասին խոսելը...

Այդ պահին քայլերի ձայն լսվեց, և խավարի մեջ երևաց մի անցորդ, որ գալիս էր դեպի մեզ: Երկուսս էլ դողացինք: Նա քիչ մնաց գոռար: Ես նրա ձեռը բաց թողեցի և մի շարժում արի՝ իբր թե նրանից հեռանալու: Բայց մենք սխալված էինք: Եկողը նա չէր:

- Ինչո՞ւ եք դուք վախենում, ինչո՞ւ ձեռս բաց թողեցիք,- ասաց, նորեն ձեռն ինձ տալով: Է՛հ, ի՞նչ կա. մենք նրան կհանդիպենք միասին: Ես ուզում եմ, որ նա տեսնի, թե ինչպես ենք մենք իրար սիրում:

- Ինչպես ենք մենք իրար սիրո՞ւմ,- գոչեցի ես:

«Օ՛, Նաստենկա, Նաստենկա,- մտածեցի ես,- որքան շատ բան ասացիր դու այդ խոսքով: Այդպիսի սիրուց, Նաստենկա, մի ուրիշ անգամ մարդու սիրտն է սառչում ու հոգին ճնշվում ծանրության ներքո: Քո ձեռը սառն է, իմն այրվում է կրակի պես: Որքա՛ն կույր ես դու, Նաստենկա... Օ՛հ, որքան երբեմն անտանելի է երջանիկ մարդը: Բայց ես չկարողացա բարկանալ քեզ վրա»...

Վերջապես սիրտս լցվեց մինչև ծայրը:

- Նաստենկա, Նաստենկա,- գոչեցի ես, գիտե՞ք արդյոք ամբողջ օրն ինչ դրության մեջ էի ես:

- Ի՞նչ դրության, ի՞նչ դրության: Ասացեք շուտով: Ինչո՞ւ էիք մինչև այժմ լռել:

- Առաջինը՝ Նաստենկա, երբ ես կատարեցի ձեր բոլոր հանձնարարությունները, երբ գնացի ձեր ցույց տված բարի մարդկանց մոտ, նամակը տվեցի... տուն եկա և

պառկեցի քնելու:

- Միայն ա՞յդ,- ընդհատեց նա՝ ծիծաղելով:

- Այո, գրեթե միայն այդ,- պատասխանեցի ակամա, որովհետև աչքերիս մեջ եռում էին հիմար արցունքները:- Ես զարթնեցի մեր տեսակցությունից մի ժամ առաջ, բայց այնպես, որ կարծես չէի էլ քնել: Չգիտեմ՝ ինչ էր պատահել ինձ: Ես գալիս էի, որ ձեզ պատմեմ այդ բոլորը, կարծես ժամանակն ինձ համար կանգ էր առել, կարծես թե այդ ժամանակից մի զգացողություն, մի զգացում պետք է իմ մեջ մնա հավիտյան, կարծես թե մի որպեն պիտի տևի ամբողջ հավիտենականություն և կարծես թե ամբողջ կյանքը կանգ է առել ինձ համար... Երբ ես զարթնեցի, թվաց ինձ, որ մի ինչ-որ վաղուց ծանոթ, ուր որ է լսված, մոռացված, անուշ երաժշտական եղանակ եկավ միտս: Թվաց ինձ, որ ամբողջ կյանքս նա ձգտել է հոգուցս դուրս, և միայն այժմ...

- Ա՜խ, Աստված իմ, Աստված,- ընդհատեց Նաստենկան,- այդ ինչպե՞ս է, որ այդպես է: Ես ոչ մի բառ չեմ հասկանում:

- Ա՜խ, Նաստենկա: Ես կցանկանայի մի կերպ հաղորդել ձեզ այդ տարօրինակ տպավորությունը,- սկսեցի ես աղերսալի ձայնով, որի մեջ տակավին թաքնված էր մի հույս, թեև շատ հեռավոր:

- Բավական է, կանգ առեք, բավական է,- արտասանեց նա, և մի վայրկյանում գուշակեց սատանի ճուտը:

Շանկարծ նա դարձավ արտասովոր շատախոս, ուրախ, չարաճճի: Նա թևս առավ, ծիծաղեց, կամեցավ, որ ես էլ ծիծաղեմ, և իմ ամեն մի խառնակ բառը նրա մեջ արթնացնում էր երկարատև ու հնչուն ծիծաղ... Ես բար-

կացա, նա հանկարծ սկսեց սեթևեթել...

- Լսեցեք,- սկսեց նա,- չէ՞ որ ինձ համար անհաճո է, որ դուք ինձ վրա չսիրահարվեցիք: Եկեք ու դրանից հետո հասկացեք մարդուն: Այնուամենայնիվ, անդրդվելի պարոն, դուք չեք կարող ինձ չգովել նրա համար, որ ես այսքան պարզ եմ: Ես ձեզ ասում եմ ամեն բան, ամեն բան, ինչ հիմարություն էլ որ անցնում է իմ գլխով:

- Ականջ դրեք, կարծեմ տասնմեկ ժամն է զարկում,- ասացի ես, երբ զանգի միաչափ ձայնը հնչեց հեռավոր քաղաքային աշտարակից:

Նա հանկարծ կանգ առավ, դադարեց ծիծաղել և սկսեց զարկերը համրել:

- Այո՛, տասնմեկ,- ասաց նա վերջապես անորոշ ու անվստահ ձայնով:

Ես իսկույն ևեթ զղջացի, որ նրան վախեցրի, ստիպեցի ժամերը համրել և, անիծեցի ինձ չարանալուս համար: Ես տխրեցի Նաստենկայի համար և չիմացա ինչպես քավեմ իմ մեղքը: Ես սկսեցի նրան մխիթարել, սպասված մարդու բացակայության համար պատճառներ գտնել, բերել զանազան առարկություններ ու ապացույցներ: Ոչ ոքի այնքան դյուրին չէր այդ րոպեին խաբել, որքան Նաստենկային, այն էլ պիտի ասել, որ այդ րոպեին ամեն մեկը մի տեսակ ուրախությամբ է լսում որևէ սփոփանք, և ուրախ է, երբ կա արդարացման գեթ մի ստվեր:

- Վերջապես, ծիծաղելի է,- սկսեցի ես ավելի ու ավելի տաքանալով և իմ ապացույցների անսովոր պարզությամբ հիանալով,- վերջապես, նա չէր էլ կարող գալ. դուք ինձ էլ խաբեցիք ու բերեցիք այստեղ, Նաստենկա, այնպես որ ես էլ կորցրի ժամանակի հաշիվը... Դուք միայն մտածե-

ցեք. նա հազիվ կարող էր ձեր նամակն ստանալ. ասենք թե նա չի կարող գալ, ասենք թե կպատասխանի նամակով, բայց նամակը չի կարող գալ վաղվանից առաջ: Ես վաղը լուսաբացին կգնամ նրա հետևից և իսկույն քեզ կհայտնեմ: Վերջապես, ենթադրեցեք հազար ու մի հավանականություններ, օրինակ. նամակը գալու ժամանակ նա տանը չի եղել, և կարելի է՝ նա մինչև այժմ էլ չի ստացել: Չէ՞ որ կարող է ամեն բան պատահել:

- Այո՛, այո՛,- պատասխանեց Նաստենկան,- ես չեմ էլ մտածել այդ մասին, իհարկե, ամեն բան կարող է պատահել,- շարունակեց նա ամենահաշտասեր ձայնով, որի մեջ, սակայն լսվում էր դիսոնանս, լսվում էր ինչ-որ մի ուրիշ, հեռավոր միտք:- Ահա՝ դուք ինչ արեք,- շարունակեց նա,- վաղը որքան կարելի է կանուխ գնացեք և եթե մի որևէ բան կիմանաք, ինձ հաղորդեցեք: Չէ՞ որ գիտեք՝ ես որտեղ եմ կենում:

Եվ նա կրկնեց իր հասցեն: Շետո հանկարծ դարձավ իմ վերաբերմամբ քնքույշ, համեստ... Թվում էր, որ ուշադրությամբ լսում է իմ ասածները, բայց երբ ես դարձա նրան ինչ-որ հարցով, լռեց, շփոթվեց ու երեսը դարձրեց ինձնից: Ես նայեցի նրա աչքերին, այո՛, նա լալիս էր:

- Դե՛, դե՛, կարելի՞ է միթե, կարելի՞ է միթե,- գոչեցի ես:- Ա՛խ, ինչ երեխա եք, ինչ երեխայություն... Բավական է:

Նա փորձեց ժպտալ, հանգստանալ, բայց ծնոտը դողում էր և կուրծքը տակավին փքվում էր:

- Ես ձեր մասին եմ մտածում,- ասաց նա բոպեական լռությունից հետո,- դուք այնքան բարի եք, որ ես քարեղեն կլինեի, եթե այդ չզգայի: Գիտե՞ք, ինչ ծագեց իմ գլխում: Ես ձեզ երկուսիդ համեմատեցի իրար հետ: Ինչո՞ւ նա դուք

չեք: Ինչո՞ւ նա այնպիսին չէ, որպես դուք: Նա ձեզնից վատ է, թեև ես նրան ձեզնից ավելի եմ սիրում:

Ես ոչինչ չպատասխանեցի: Նա կարծես սպասում էր, որ մի բան ասեմ:

- Իհարկե, կարելի է ես նրան լավ չեմ հասկանում, լավ չեմ ճանաչում: Գիտեք, ես կարծես միշտ նրանից վախեցել եմ. նա միշտ այնպես լուրջ, այնպես հպարտ էր, որ չեմ կարող ասել: Իհարկե, ես գիտեմ, որ նա միայն այդպես էր երևում, իսկ նրա սրտի մեջ ավելի քնքշություն կար, քան իմ սրտում... Ես հիշում եմ, թե ինչպես նա նայեց ինձ վրա այն ժամանակ, երբ ես, հիշո՞ւմ եք, եկա նրա մոտ կապոցը ձեռքիս, բայց այնուամենայնիվ ես նրան մի տեսակ շատ եմ հարգում, չէ՞ որ մենք կարծես հավասարներ չենք:

- Ո՛չ, Նաստենկա, ո՛չ,- պատասխանեցի ես,- այդ նշանակում է, որ դուք նրան աշխարհի երեսին ամենից ավելի եք սիրում, և շատ ավելի, քան ձեզ:

- Ասենք՝ թե այդ ճիշտ է,- պատասխանեց միամիտ Նաստենկան,- բայց գիտե՞ք, արդյոք, այժմ ինչ մտավ գլուխս: Միայն այժմ ես նրա մասին չեմ խոսելու, այլ առհասարակ: Այդ բանը վաղուց է գլուխս մտել: Լսեցեք, ինչո՞ւ մենք ամենքս այնպես չենք իրար հետ, ինչպես եղբայրները՝ եղբայրների հետ: Ինչո՞ւ ամենալավ մարդը միշտ կարծես մի ինչ-որ բան թաքցնում է մյուսից և լռում է: Ինչո՞ւ ուղղակի, իսկույն և եթ չասել ինչ-որ կա սրտիդ մեջ, եթե գիտես՝ քամուն չես ասում քո խոսքը: Թե չէ ամեն մեկն այնպես է նայում, որ թվում է, թե նա ավելի դաժան է, քան իսկապես, կարծես ամենքը վախենում են իրենց զգացումները վիրավորել, երբ շատ շուտ են արտահայտում նրանց:

- Ա՛խ, Նաստենկա։ Ճշմարիտ եք ասում դուք, բայց այդ առաջանում է շատ պատճառներից,- ընդհատեցի ես, որ այդ րոպեին ավելի քան երբևէ զսպել էի զգացումները։

- Ո՛չ, ո՛չ,- պատասխանեց նա խորը զգացումով։- Ահա դուք, օրինակի համար, այնպես չեք, ինչպես ուրիշները։ Ես՝ ուղիղն ասած, չգիտեմ ինչպես այդ բացատրեմ ձեզ, թե ինչ եմ զգում, բայց ինձ թվում է, որ դուք, օրինակի համար, թեկուզ այժմ... Ինձ թվում է, որ դուք մի ինչ-որ բան եք զոհում ինձ համար,- ավելացրեց նա ամոթխածությամբ, անցողակի նայելով ինձ վրա։- Դուք ինձ ներեցեք, որ այդպես եմ ասում ձեզ, չէ՞ որ ես մի հասարակ աղջիկ եմ, չէ՞ որ ես աշխարհում շատ քիչ բան եմ տեսել և, ճշմարիտ, երբեմն չգիտեմ խոսել,- ավելացրեց նա ինչ-որ մի գաղտնի զգացումից դողացող ձայնով և միևնույն ժամանակ աշխատելով ժպտալ.- բայց ես ուզում էի ասել, թե շնորհակալ եմ, որ ես էլ այդ բոլորն զգում եմ... Օ՛, թող Աստված դրա փոխարեն ձեզ երջանկություն տա։ Ահա այն, ինչ-որ դուք այն ժամանակ ինձ ասացիք ձեր երազողի մասին, բոլորովին ճիշտ չէ, այսինքն, ես ուզում եմ ասել, որ միանգամայն ձեզ չի վերաբերում։ Դուք առողջանում եք, դուք, հավատացեք, բոլորովին այլ մարդ եք, քան ինքներդ ձեզ նկարագրեցիք։ Եթե դուք երբևէ սիրեք, տա Աստված, որ ձեր սիրածի հետ բախտավոր լինեք, իսկ ձեր սիրածին ոչինչ չեմ ցանկանում, որովհետև նա ձեզ հետ բախտավոր է լինելու։ Ես գիտեմ, ես ինքս կին եմ, և դուք պիտի հավատաք ինձ, քանի որ այսպես եմ ասում։

Նա լռեց և ձեռս ամուր սեղմեց։ Ես և՛ս հուզումից ոչինչ չկարողացա ասել։ Անցան մի քանի րոպեներ։

- Այո՛, երևում է, որ նա այսօր չի գա,- ասաց նա, վեր-

ջապես գլուխը բարձրացնելով:- Ուշ է..

- Նա կգա վաղը,- ասացի ես ամենահամոզիչ և հաստատ ձայնով:

- Այո՛,- ավելացրեց նա ուրախանալով,- ես ինքս այժմ տեսնում եմ, որ նա միայն վաղը կգա: Դե՛, ուրեմն ցտեսություն: Մինչև վաղը: Եթե անձրև լինի, կարելի է ես չգամ: Բայց վաղը չէ մյուս օրը կգամ, անպատճառ կգամ, ինչ որ էլ ինձ պատահի, անպատճառ այստեղ եղեք. ես ուզում եմ ձեզ տեսնել, ես ամեն ինչ ձեզ կպատմեմ:

Հետո, երբ մենք հրաժեշտ էինք տալիս իրար, նա ձեռը պարզեց ինձ և նայելով ինձ պայծառ, ասաց.

- Չէ՞ որ մենք այժմ առ միշտ միասին ենք լինելու, ճի՞շտ է: թվագրությունը ֆ 1915.ուժգ կարդա

Օ՛, Նաստենկա, Նաստենկա: Եթե դու գիտենայիր՝ այժմ որքան մենակ եմ ես:

Երբ ինը ժամը զարկեց, ես չկարողացա տանը նստել սենյակումս, հագնվեցի ու դուրս եկա, չնայելով վատ եղանակին: Ես այնտեղ էի, մեր նստարանի վրա: Ես կամեցա գնալ նրանց նրբանցքը, բայց ամաչեցի և հետ դարձա երկու քայլ հեռու նրանց տնից, անգամ լուսամուտին չնայելով: Ես տուն եկա այնպիսի թախիծի մեջ, որպիսին երբեք չէի ունեցել: Ի՜նչ խոնավ ու տխուր է եղանակը: Եթե լավ եղանակ լիներ, ես կզբոսնեի ամբողջ գիշեր...

Սակայն մինչև վաղը, մինչև վաղը: Նա ինձ ամեն բան կպատմի: Բայց այսօր նամակ չեկավ: Սակայն այդպես էլ պիտի լիներ: Նրանք արդեն իրար հետ են...

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Տե՛ր Աստված. ինչով վերջացավ այդ բոլորը, ինչով: Ես եկա այնտեղ ինը ժամին: Նա արդեն այնտեղ էր: Ես դեռ հեռվից տեսա նրան: Նա կանգնած էր, ինչպես առաջին անգամ, հենված գետափի ճաղերին, և չլսեց, թե ինչպես մոտեցա իրեն:

- Նաստենկա,- կանչեցի ես նրան, ուժով զսպելով հուզումս:

Նա երեսն արագ դարձրեց ինձ:

- Դե,- ասաց նա,- դե՛, շո՛ւտ, շո՛ւտ:

Ես նայեցի նրան տարակուսանքով:

- Դե՛, ո՞ւր է նամակը: Դուք բերե՞լեք նամակը,- կրկնեց նա, ձեռներով կառչելով ճաղերին:

- Ո՛չ, նամակ չկա ինձ մոտ,- ասացի ես, վերջապես,- մի՞թե նա դեռ չի եկել:

Նա սարսափելի գունատվեց և երկար ժամանակ անշարժ նայում էր ինձ: Ես խորտակել էի նրա վերջին հույսը:

- Է՛հ, տերը նրա հետ,- արտասանեց նա, վերջապես, ընդհատվող ձայնով:- Տերը նրա հետ, քանի որ նա ինձ այդպես ձգում է...

Նա աչքերն իջեցրեց, հետո կամեցավ ինձ նայել, չկարողացավ: Դարձյալ մի քանի րոպե զսպեց իր հուզմունքը, բայց հանկարծ երեսը դարձրեց ինձնից, հենվելով գետափի ճաղերին, և հեղեղվեց արտասուքով:

- Բա՛վ է, բա՛վ է,- փորձեցի ես խոսել, բայց ուժերս չբավեցին շարունակելու, նայելով նրան, և ի՞նչ պիտի ասեի:

- Մի՛ սփոփեք ինձ,- ասաց նա, լալով,- մի՛ խոսեք նրա

մասին, մի՛ ասեք, որ նա կգա, որ նա ինձ այնպես դաժանորեն չի ձգել, այնպես անմարդավայել, ինչպես նա արավ այդ... Ինչի՞ համար, ինչի՞ համար: Մի՞թե մի որևէ բան է եղել իմ նամակի մեջ, այդ դժբախտ նամակի...

Այստեղ հեծկլտանքը կտրատեց նրա ձայնը. նայելով նրան, իմ սիրտն էր հոշոտվում:

- Օ՛, որքան այդ դաժան է ու անմարդկային,- սկսեց նա նորից:- Եվ ո՛չ մի տող, ո՛չ մի տող: Գոնե պատասխաներ, որ ես պետք չեմ նրան, որ նա մերժում է ինձ, թե չէ ամբողջ երեք օր և ոչ մի տող: Որքան դյուրին է նրա համար անարգել մի խեղճ, անպաշտպան աղջկա, որը մեղավոր է միայն նրանով, որ սիրում է նրան: Օ՛, որքան եմ ես տանջվել այս օրերը: Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ: Երբ հիշում եմ, որ ես ինքս եկա նրա մոտ առաջին անգամ, որ ես նրա առջև ստորացա, լաց եղա, որ ես աղերսեցի նրանից գեթ մի կաթիլ սեր... Եվ այդ բոլորից հետո...- Լսեցեք,- դարձավ նա ինձ, և նրա սև աչքերը պսպղացին,- այդ այդպես չէ, այդպես չի կարող լինել, այդ անբնական է: Մոլորվում ենք կամ դուք կամ ես. գուցե նամակը չի՞ ստացել, գուցե նա մինչև այժմ ոչինչ չգիտե: Ինքներդ դատեցեք, ասացեք ինձ, ի սեր Աստծու, բացատրեցեք, ես ինքս այդ չեմ կարող հասկանալ՝ ինչպե՞ս կարելի է այդպես բարբարոսաբար- կոպիտ վարվել, ինչպես նա վարվեց ինձ հետ: Ոչ մի բառ: Բայց չէ՞ որ աշխարհի ամենավերջին մարդու վերաբերմամբ ավելի կարեկցաբար են վարվում: Գուցե նա մի բա՞ն է լսել, գուցե որևէ մեկն ինձ զրպարտել է նրա մոտ,- գոչեց նա, դառնալով ինձ այդ հարցով:- Ինչպե՞ս, ինչպե՞ս եք կարծում դուք:

- Լսեցեք, Նաստենկա, վաղը ես քո անունից կգնամ նրա մոտ:

- Հետո՞:

- Ես նրան հարց ու փորձ կանեմ, ամեն ինչ կպատմեմ նրան:

- Հետո՞, հետո՞:

- Դուք գրեցեք մի նամակ: Մի՛ ասեք «ոչ», Նաստենկա, «ոչ» մի ասեք: Ես նրան կստիպեմ հարգել ձեր վարմունքը, նա ամեն բան կիմանա, իսկ եթե...

- Ո՛չ, իմ բարեկամ, ո՛չ,- ընդհատեց նա:- Բավական է: Այլևս ոչ մի բառ, ոչ մի բառ ինձնից, ոչ մի տող. բավական է: Ես նրան չեմ ճանաչում, ես նրան այլևս չեմ սիրում, ես նրան կը... մո.. ռա.. նամ...

Նա չավարտեց:

- Հանգստացեք, հանգստացեք: Նստեք այստեղ, Նաստենկա,- ասացի ես, նստեցնելով նրան նստարանի վրա...

- Ես հանգիստ եմ: Բավական է: Այդ այդպես է: Այս արցունքները կչորանան: Ի՞նչ եք կարծում, որ ես ինձ կկործանե՞մ, որ ես կխեղդվե՞մ ջրի մեջ...

Սիրտս լեցուն էր, ես խոսել կամեցա, բայց չկարողացա:

- Լսեցեք,- շարունակեց նա, ձեռս բռնելով:- Ասացեք, դուք այդպես չէի՞ք վարվի: Դուք չէի՞ք ձգի նրան, որն ինքն է եկել ձեզ մոտ, դուք չէի՞ք շպրտի նրա երեսին անամոթ ծաղր նրա թույլ հիմար սրտի վրա: Դուք կխնայեի՞ք նրան: Դուք կերևակայեիք, որ նա մենակ էր, որ նա չկարողացավ ինքն իրեն հսկել, որ նա չկարողացավ պաշտպանվել իր սիրուց դեպի ձեզ, որ նա մեղավոր չէ, որ նա, վերջապես, մեղավոր չէ, որ նա ոչինչ չի արել... Ա՛հ, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ...

- Նաստենկա,- գոչեցի ես, վերջապես, չունենալով ուժ

հուզմունքս հաղթահարելու,- Նաստենկա։ Դուք խոցում եք իմ սիրտը, դուք ինձ սպանում եք, Նաստենկա։ Ես լռել չեմ կարող։ Ես պետք է, վերջապես, խոսեմ, ասեմ այն, ինչ որ եռում է այստեղ, սրտիս մեջ...

Այս ասելով, ես ոտքի ելա։ Նա ձեռս բռնեց ու զարմացած նայեց ինձ։

- Ի՞նչ պատահեց ձեզ,- հարցրեց նա, վերջապես։

- Լսեցե՛ք,- ասացի ես վճռական եղանակով։- Լսեցե՛ք ինձ, Նաստենկա։ Բոլորը, ինչ որ պիտի այժմ ասեմ, դատարկ բաներ են, բոլորն՝ անիրագործելի, բոլորը՝ հիմար։ Ես գիտեմ, որ երբեք այդ չի կարող պատահել, բայց, ի՛նչ արած, լռել չեմ կարող։ Հանուն այն բանի, որի համար դուք այժմ տառապում եք, կանխավ աղերսում եմ ձեզ, ներեցեք ինձ...

- Բայց ի՞նչ, ի՞նչ,- արտասանեց նա, դադարելով լալ և սևեռուն նայելով ինձ, մինչ նրա զարմացած աչքերի մեջ փայլում էր մի տարօրինակ հետաքրքրություն։- Ի՞նչ է պատահել ձեզ։

- Այդ անիրագործելի է, բայց ես ձեզ սիրում եմ, Նաստենկա։ Ահա՛ թե ինչ։ Դեհ, այժմ ամեն ինչ ասված է,- ասացի ես, ձեռքս թոթափելով։ Այժմ դուք կտեսնեք՝ կարո՞ղ եք արդյոք ինձ հետ խոսել այնպես, ինչպես խոսում էիք, կարո՞ղ եք արդյոք վերջապես, լսել այն, ինչ որ պիտի ասեմ ձեզ...

- Բայց ի՞նչ, ի՞նչ,- ընդհատեց Նաստենկան։- Ի՞նչ դուրս եկավ դրանից։ Դե՛, ես վաղուց գիտեի, որ դուք ինձ սիրում եք, միայն ինձ թվում էր, որ դուք ինձ այնպես պարզ և մի որևէ կերպ սիրում եք... Ա՛խ, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ։

- Սկզբում իմ սերը պարզ, հասարակ էր, Նաստենկա, իսկ այժմ, այժմ... Ես նույնն եմ, ինչ որ դուք էիք, երբ գնացիք նրա մոտ կապոցով: Ավելի վատ, քան դուք, Նաստենկա, որովհետև այն ժամանակ նա ոչ ոքի չէր սիրում, իսկ դուք սիրում եք:

- Այդ ի՞նչ եք ասում ինձ: Վերջապես, ես ձեզ բոլորովին չեմ հասկանում: Բայց լսեցեք, ինչո՞ւ համար դուք, այսինքն՝ ոչ թե ինչու, այլ ինչի՞ց դուք այդպես, և այդպես հանկարծ... Տե՛ր Աստված, ես հիմարություններ եմ ասում: Բայց դուք...

Եվ Նաստենկան միանգամայն խառնաշփոթվեց: Նրա այտերը վառվեցին, նա աչքերը իջեցրեց:

- Ի՞նչ արած, Նաստենկա, ի՞նչ պիտի անեմ ես: Ես մեղավոր եմ, ես ի չարը գործադրեցի... Բայց ո՛չ ոք երբեք, ո՛չ, ես մեղավոր չեմ, Նաստենկա, ես այդ լսում եմ, զգում եմ, որովհետև սիրտս է ասում ինձ, որ ես իրավացի եմ, որովհետև ես ոչնչով չեմ կարող վիրավորել, ոչնչով անարգել: Ես ձեր բարեկամն էի, ահա այժմ էլ բարեկամ եմ, ես ոչնչի չեմ դավաճանել: Ահա այժմ արտասուք է թափվում իմ աչքերից, Նաստենկա: Թող թափվեն, թող թափվեն, նրանք ոչ ոքի չեն խանգարում: Նրանք կչորանան, Նաստենկա...

- Նստեցեք, նստեցեք, էլի,- ասաց նա, ինձ նստեցնելով նստարանի վրա,- ա՛խ, Աստվա՛ծ իմ:

- Նաստենկա, ես չեմ նստի, ես արդեն այլևս չեմ կարող այստեղ մնալ, դուք ինձ այլևս չեք կարող տեսնել. ես ամեն ինչ կասեմ ու կերթամ: Ես միայն ուզում եմ ասել, որ դուք երբեք չէիք գիտնալ, թե ես ձեզ սիրում եմ: Ես գաղտնիքս կպահեի: Ես ձեզ չէի տանջի այս րոպեին իմ էգոիզմով: Ո՛չ: Բայց ես այժմ չկարողացա համբերել, դուք ինքներդ

խոսեցիք այդ մասին, դուք մեղավոր եք, դուք եք մեղավոր ամեն բանի մեջ, իսկ ես մեղավոր չեմ: Դուք չեք կարող ինձ վռնդել ձեզնից...

- Ո՛չ, ո՛չ, ես ձեզ չեմ վռնդում, ո՛չ,- ասաց Նաստենկան, կարողացածին չափ թաքցնելով իր շփոթմունքը, խեղճ աղջիկը:

- Դուք ինձ չե՞ք վռնդում: Ո՞չ: Իսկ ես ինքս կամենում էի ձեզնից փախչել: Եվ կգնամ ես, միայն առաջ բոլորը կասեմ, որովհետև երբ դուք այստեղ խոսում էիք, ես չէի կարողանում նստել, որովհետև, երբ դուք լալիս էիք, երբ դուք մաշվում էիք նրա համար, որ (ներեցեք, Նաստենկա, ես պիտի ասեմ այդ) ձեզ մերժել էին, նրա համար, որ ձեր սերը հրել էին, ես զգացի, ես լսեցի, որ իմ սրտի մեջ կա այնքան սեր, Նաստենկա, այնքան սեր ձեզ համար... Եվ ես այնքան դառնացա, որ չեմ կարող օգնել ձեզ իմ սիրով, որ սիրտս պայթում էր, և ես, չկարողացա լռել, այլ պետք է խոսեի, Նաստենկա, ես պետք է խոսեի...

- Այո՛, այո, խոսեցեք, խոսեցեք ինձ հետ,- ասաց Նաստենկան, մի անբացատրելի շարժումով: Գուցե ձեզ տարօրինակ է թվում, որ ես ձեզ հետ այսպես եմ խոսում, բայց խոսեցեք... Ես ձեզ հետո կասեմ: Ես ձեզ ամեն բան կպատմեմ:

- Դուք ինձ խղճում եք, Նաստենկա, դուք պարզորեն խղճում եք ինձ, բարեկամիս: Է՜հ, ինչ որ կորած է, կորած է: Ինչ որ ասված է, հետ դարձնել չես կարող: Այնպես չէ՞: Դե՛հ, այժմ դուք ամեն բան գիտեք: Դե՛, դա իմ ելակետն է: Դե՛, լավ: Այժմ այդ բոլորը գեղեցիկ, միայն լսեցեք: Երբ դուք նստած լաց էիք լինում, ես իմ մեջ մտածում էի (ա՛խ, թողեք ինձ ասեմ՝ ինչ էի մտածում), ես մտածում էի, որ (դե,

իհարկե, Նաստենկա, այդ չի կարող լինել), ես մտածում էի, որ դուք... ես մտածում էի, որ դուք որևէ կերպ... Բոլորովին մի կողմնակի կերպով, դուք այլևս նրան չեք սիրում: Այն ժամանակ, ես երեկ էլ, անցյալ օրն էլ, Նաստենկա, այդ մտածել եմ, այն ժամանակ ես այնպես կանեի, անպատճառ այնպես կանեի, որ դուք ինձ սիրեք. չէ՞ որ դուք ասացիք, չէ՞ որ դուք ինքներդ ասացիք, Նաստենկա, որ դուք ինձ արդեն համարյա թե բոլորովին սիրում եք: Դե՛, հետո ի՞նչ ասել: Դե՛, ահա գրեթե ամենը, որ ես ուզում էի ասել, մնում է միայն ավելացնել, թե ինչ կլիներ, եթե դուք ինձ սիրեիք, միայն այդ, ուրիշ ոչինչ: Լսեցեք, իմ բարեկամ, որովհետև այնուամենայնիվ դուք իմ բարեկամն եք, ես, իհարկե, հասարակ մարդ եմ, աղքատ, աննշան, միայն բանն այն չէ (ես մի գլուխ այն չեմ ասում, չգիտեմ, ոչինչ, Նաստենկա, շփոթվելուցս է), բանն այն է, որ ես ձեզ այնպես կսիրեի, այնպես կսիրեի, որ եթե դուք դեռ սիրեիք նրան ու շարունակեիք սիրել նրան, որին ես չեմ ճանաչում, այնուամենայնիվ չէիք նկատի, թե իմ սերը որևէ կերպ ձեզ համար մի լուծ է: Դուք միայն կլսեիք, դուք միայն կզգայիք ամեն մի որպես, որ ձեր մոտ բաբախում է մի շնորհակալ, շնորհակալ սիրտ, տաք սիրտ, որը ձեզ համար... Ա՛խ, Նաստենկա, Նաստենկա, դուք ի՞նչ արիք ինձ, ի՞նչ արիք...

- Լաց մի՛ լինեք, ես չեմ ուզում, որ դուք լաց լինեք,- ասաց Նաստենկան, նստարանից արագ վեր կենալով:- Գնանք, վեր կացեք, գնանք միասին, լաց մի՛ լինեք, լաց մի՛ լինեք,- շարունակեց նա, իր թաշկինակով իմ աչքերը սրբելով,- դե՛, գնանք այժմ. ես գուցե ձեզ մի բան կասեմ... Դե՛, քանի որ դեռ սիրում եմ նրան (չեմ ուզում ձեզ խաբել)... Բայց լսեցեք, պատասխանեցեք ինձ: Եթե ես, օրի-

նակի համար, ձեզ սիրեի, այսինքն, եթե ես միայն.... Ա՛խ, իմ բարեկամ, իմ բարեկամ: Zենց որ մտածում եմ, հենց որ մտածում եմ, որ ես ձեզ վիրավորեցի այն ժամանակ, երբ ծիծաղում էի ձեր սիրո վրա, երբ ձեզ գովում էի, որ ինձ վրա չեք սիրահարվել... Ա՛հ, Աստվա՛ծ իմ: Այդ ինչպե՞ս եղավ՝ ես չնախատեսեցի, ինչպե՞ս չնախատեսեցի, ինչպե՞ս ես այդպես հիմարացա, բայց... Դե՛, դե՛, ես վճռեցի, ես ամեն բան կասեմ...

- Լսեցեք, Նաստենկա, գիտե՞ք ինչ: Ես ձեզնից կհեռանամ, ահա ինչ: Ես ուղղակի տանջում եմ ձեզ: Ահա այժմ դուք խղճի խայթ եք զգում, որ ծիծաղել եք, իսկ ես չեմ ուզում, այո՛, չեմ ուզում, որ դուք, բացի ձեր վշտից... Ես, իհարկե, մեղավոր եմ, Նաստենկա, բայց, մնաք բարո՛վ...

- Կանգ առեք, լսեցեք ինձ. դուք կարո՞ղ եք սպասել:

- Ինչի՞ սպասել, ինչպե՞ս:

- Ես նրան սիրում եմ, բայց այդ կանցնի, այդ պետք է անցնի, այդ չի կարող չանցնել. այդ արդեն անցնում է, ես լսում եմ... Ո՛վ գիտե, գուցե այսօր իսկ ամեն բան կվերջանա, որովհետև ես նրան ատում եմ, որովհետև նա ինձ անարգեց, այնինչ դուք ինձ հետ միասին լաց եղաք այստեղ, որովհետև դուք ինձ չէիք հրի, ինչպես նա հրեց, որովհետև դուք սիրում եք, իսկ նա ինձ չի սիրել, որովհետև, վերջապես, ես ինքս էլ ձեզ սիրում եմ... Սիրում եմ այնպես, ինչպես դուք եք ինձ սիրում. չէ՞ որ ես ինքս դեռ առաջ ասացի ձեզ, դուք ինքներդ լսեցիք, նրա համար եմ սիրում, որ դուք նրանից ավելի լավ եք, որովհետև ավելի ազնիվ եք, քան նա, որովհետև, որովհետև նա...

Խեղճի հուզմունքն այնքան զորեղ էր, որ նա չավարտեց, գլուխը դրեց ուսիս վրա, հետո կրծքիս վրա և դառ-

նորեն լաց եղավ: Ես նրան սփոփում էի, համոզում էի, բայց նա չկարողացավ դադարել լաց լինելուց: Նա շարունակ սեղմում էր ձեռս և հեկեկալով ասում էր. «Սպասեցեք, սպասեցեք, ահա ես իսկույն կդադարեմ: Ես ուզում եմ ձեզ ասել... Դուք մի՛ կարծեք, որ այս արտասուքը, այդ այնպես, թուլությունից է, սպասեցեք, մինչև որ անցնի»... Վերջապես նա դադարեց, արտասուքը սրբեց, և մենք նորեն քայլեցինք: Ես կամեցա խոսել, բայց նա երկար ժամանակ ինձ խնդրում էր սպասել: Մենք լռեցինք... Վերջապես նա ուշքը ժողովեց ու սկսեց խոսել...

- Ահա ինչ,- սկսեց նա դողդոջ ու թույլ ձայնով, որի մեջ, սակայն, հնչեց ինչ-որ մի բան, որ ուղղակի ցնցվեց սրտիս մեջ և այնտեղ քաղցր մրմնջաց,- մի՛ կարծեք, թե ես այսպես անհաստատ եմ ու թեթևսոլիկ մի՛ կարծեք, թե ես կարող եմ այնպես շուտ ու դյուրին մոռանալ ու դավաճանել... Ես մի ամբողջ տարի նրան սիրել եմ, և երդվում եմ Աստծով, որ երբեք, երբեք, մինչև անգամ մտքով նրան անհավատարիմ չեմ եղել: Նա այդ չտեսավ, նա ծաղրեց ինձ, տերը նրա հետ, բայց նա խոցոտեց ու անարգեց իմ սիրտը: Ես... ես նրան չեմ սիրում, որովհետև ես կարող եմ սիրել միայն նրան, որ վեհանձն է, որ ինձ հասկանում է, որ ազնիվ է, որովհետև ես ինքս այդպիսին եմ, և նա ինձ արժանի չէ: Է՛հ, տերը նրա հետ: Ավելի լավ է, որ այդպես արավ, քան թե հետո ես խաբվեի իմ սպասումների մեջ ու իմանայի, որ նա այդպես է... Դե՛ վերջացավ: Բայց ո՞վ գիտե, իմ բարի բարեկամ,- շարունակեց Նաստենկան, ձեռս սեղմելով,- ո՞վ գիտե, կարելի է իմ սերն էլ ամբողջովին եղել է զգացումների երևակայության խաբեություն, կարելի է այդ սերն սկսվել է չարաճճիությամբ այն պատճառով, որ

ես եղել եմ տատի հսկողության ներքո՞: Կարելի է ես պետք է սիրեմ մի ուրիշին, ոչ նրան, ոչ մի այդպիսի մարդու, այլ մի այնպիսուն, որ ինձ խղճար և, և... Դե՛, թողնենք այդ, թողնենք,- ընդհատեց իր խոսքը Նաստենկան, հուզմունքից խեղդվելով,- ես միայն կամենում էի ասել ձեզ... ես միայն կամենում էի ասել ձեզ, թե եթե, չնայելով, որ սիրում եմ նրան (ո՛չ՝ սիրել եմ), եթե չնայելով դրան, դուք դեռ կասեք... Եթե դուք զգում եք, թե ձեր սերը մեծ է, թե այդ սերը կարող է վերջապես իմ սրտից դուրս մղել այն նախկին սերը... Եթե դուք կկամենաք կարեկցել ինձ, եթե չեք կամենալ ինձ իմ ճակատագրին թողնել, առանց սփոփանքի, առանց հույսի, եթե դուք կկամենաք միշտ ինձ սիրել այնպես, ինչպես այժմ եք սիրում, այն ժամանակ, երդվում եմ, որ իմ շնորհակալությունը, իմ սերը, վերջապես կլինի արժանի ձեր սիրուն: Կվերցնե՞ք արդյոք այժմ իմ ձեռը:

- Նաստենկա,- գոչեցի ես, հեծկլտանքից խեղդվելով,- Նաստենկա... Օ՛, Նաստենկա...

- Դե՛, բավական է, բավական է: Դե՛, այժմ բոլորովին բավական է,- արտասանեց Նաստենկան, հազիվ ինքն իրեն հաղթահարելով,- դե՛, այժմ այլևս ամեն բան ասված է. այնպես չէ՞: Այո՞: Դե՛, դուք էլ երջանիկ եք, ես էլ երջանիկ եմ, ոչ մի խոսք այդ մասին, սպասեցեք, խնայեցեք ինձ... Խոսեցեք, ի սեր Աստծու, ուրիշ բաների մասին...

- Այո՛, Նաստենկա, այո՛, բավական է այդ մասին, այժմ ես երջանիկ եմ, ես... Դե՛, Նաստենկա, դե՛, խոսենք ուրիշ բաների մասին, շուտ, շուտ խոսենք, այո՛: Ես պատրաստ եմ...

Եվ մենք չգիտցանք ինչ խոսել, մենք ծիծաղում էինք, մենք լալիս էինք, մենք հազարավոր խոսքեր էինք ասում

առանց կապի և առանց իմաստի: Մենք մերթ գնում էինք մայթով, մերթ հանկարծ հետ էինք դառնում և սկսում էինք փողոցն անցնել, հետո կանգ էինք առնում և նորեն գնում էինք գետափը: Մենք երեխաների նման էինք...

- Ես այժմ մենակ եմ ապրում, Նաստենկա,- սկսեցի ես,- իսկ վաղը... Դե՛, իհարկե, ես, Նաստենկա, չքավոր եմ, ես ունեմ ընդամենը հազար երկու հարյուր ռուբլի տարեկան, բայց այդ ոչինչ...

- Իհարկե, ոչինչ, իսկ տատս թոշակ ունի. նա մեզ չի նեղի: Պետք է նրան էլ վերցնել:

- Անտարակույս, տատին պետք է վերցնել... Միայն Մատրյոնան...

- Ա՛խ, այո՛, մենք էլ ունենք մի Ֆյոկլա:

- Մատրյոնան բարի է, միայն մի պակասություն ունի՝ երևակայություն չունի, Նաստենկա, միանգամայն ոչ մի երևակայություն, բայց այդ ոչինչ...

- Միևնույն է. նրանք կարող են իրար հետ հարմարվել, միայն դուք վաղը տեղափոխվեցեք մեզ մոտ:

- Այդ ինչպե՞ս: Ձեզ մո՞տ: Լավ, ես պատրաստ եմ...

- Այո՛, դուք մեզ մոտ կվարձեք... Մենք այնտեղ, վերը սենյակ ունենք. նա դատարկ է, կենողը մի պառավ էր, ազնվական, գնաց, և տատս, ես գիտեմ, ուզում է վարձով տալ մի երիտասարդի: Ես հարցնում եմ. «Ինչո՞ւ երիտասարդի»: Նա ասում է. «Հենց այնպես, ես արդեն պառավել եմ, բայց դու, Նաստենկա, մի՛ կարծիր, թե ես ուզում եմ քեզ նրա հետ ամուսնացնել»: Իսկ ես գուշակում եմ, որ հենց դրա համար է ուզում...

- Ա՛խ, Նաստենկա...

Եվ երկուսն էլ ծիծաղեցին:

- Դե՛, բավական է, բավական է, էլի՛: Բայց դուք որտե՞ղ եք կենում: Ես մոռացա հարցնել:

- Այնտեղ, N-յան կամրջի մոտ, Բարաննիկովի տանը:

- Դա մի մեծ տո՞ւն է, չէ՞:

- Այո, մի մեծ տուն է:

- Ա՛խ, գիտեմ, լավ տուն է, բայց դուք, գիտե՞ք, թողեք այդ տունը և տեղափոխվեցեք մեզ մոտ շուտով...

- Վաղն ևեթ, Նաստենկա, վաղն ևեթ: Ես այնտեղ մի փոքրիկ պարտք ունեմ սենյակի համար, բայց այդ ոչինչ... Ես շուտով ռոճիկս կստանամ...

- Գիտե՞ք, ես գուցե դասեր տամ, ինքս առաջ կսովորեմ, հետո դասեր կտամ:

- Շատ գեղեցիկ... Իսկ ես շուտով պարգև պիտի ստանամ, Նաստենկա...

- Վաղվանից դուք կլինեք իմ կենողը...

- Այո, և մենք միասին կգնանք «Սևիլի սափրիչին», որովհետև շուտով էլի պիտի ներկայացնեն...

- Այո, կգնանք,- ասաց Նաստենկան ծիծաղելով,- բայց ոչ, ավելի լավ է «Սևիլի սափրիչը» չլսել, այլ մի ուրիշ բան լսել:

- Դե՛, լավ, մի ուրիշ բան, իհարկե, այդ ավելի լավ կլինի, ես այդ մասին չէի մտածել...

Այսպես խոսակցելով, մենք շրջում էինք ծխի, մառախուղի մեջ գինովցածների պես, կարծես ինքներս չգիտեինք, թե ինչ է պատահել մեզ: Մերթ կանգ էինք առնում և միևնույն տեղում երկար խոսակցում էինք, մերթ նորեն սկսում էինք շրջել և գնում էինք Աստված գիտի ուր, և նորեն ծիծաղ, կրկին արցունքներ... Մերթ Նաստենկան հանկարծ ցանկանում էր տուն գնալ, ես չեմ համարձակվում նրան պահել և ուզում եմ ուղեկցել նրան մինչև տուն:

Մենք ճանապարհ ենք ընկնում, և հանկարծ, քառորդ ժամ անցած, մենք մեզ տեսնում ենք քարափին մեր նստարանի մոտ: Մերթ նա հառաչում է, և դարձյալ արտասուք է երևում նրա աչքերին. ես երկյուղով սարսում եմ... Բայց նա նույն պահին սեղմում է իմ ձեռը և նորեն ինձ քաշում է շրջելու, խոսելու, բարբառելու...

- Այժմ ժամանակն է, ժամ է ինձ տուն գնալու, կարծում եմ՝ շատ ուշ է,- ասաց վերջապես Նաստենկան,- բավական է երեխայություն անել:

- Այո, Նաստենկա, միայն այժմ ես չեմ քնելու, ես տուն չեմ գնալու:

- Ես նույնպես կարծեմ չպիտի քնեմ, միայն դուք ինձ ուղեկցեցեք:

- Անպատճառ:

- Այժմ մենք անպայման կգնանք մինչև բնակարան...

- Անպայման, անպայման...

- Ազնի՞վ խոսք... Որովհետև չէ՞ որ հարկավոր է երբևէ տուն վերադառնալ:

- Ազնիվ խոսք,- պատասխանեցի ես՝ ծիծաղելով...

- Դե՛, գնանք:

- Գնանք: Նայեցեք երկնքին, Նաստենկա, նայեցեք: Վաղը հրաշալի օր է լինելու: Ի՜նչ կապույտ երկինք, ի՜նչ լուսին: Նայեցեք: Ահա այն դեղնագույն ամպն այժմ սքողում է լուսնին, տեսեք, տեսեք... Ո՛չ, նա անցավ գնաց լուսնի մոտով: Տեսեք, տեսեք վերջապես...

Բայց Նաստենկան չէր նայում ամպին. նա լուռ կանգնած էր իր տեղում ցցվածի պես. մի որպե անց՝ նա սկսեց մի տեսակ անվստահ մոտիկ սեղմվել ինձ: Նրա ձեռն իմ ձեռի մեջ դողաց, ես նայեցի նրան... Նա ավելի ամուր հեն-

վեց ինձ։

Այս րոպեին մեր մոտով անցավ մի երիտասարդ։ Հանկարծ նա կանգ առավ, խորը նայեց մեզ և հետո դարձյալ մի քանի քայլ արավ։ Սիրտս դողաց...

- Նաստենկա,- ասացի ես կիսաձայն,- ո՞վ է այդ, Նաստենկա։

- Այդ նա է,- պատասխանեց նա շշնջյունով, ավելի մոտիկ, ավելի դողդոջուն սեղմվելով ինձ... Ես հազիվհազ կարողանում էի կանգնել ոտներիս վրա...

- Նաստենկա, Նաստենկա, այդ դո՞ւ ես,- լսվեց մի ձայն մեր կռնակից, և նույն րոպեին երիտասարդը մի քանի քայլ մոտեցավ մեզ...

Աստվա՛ծ իմ, այն ի՛նչ աղաղակ էր։ Ինչպե՞ս Նաստենկան ցնցվեց։ Ինչպե՞ս նա դուրս պրծավ իմ ձեռներից և թռավ դեպի նա, դիմավորելու... Ես կանգնած էի ու նայում էի նրանց սպանվածի պես։ Բայց Նաստենկան հազիվ իր ձեռը տվեց նրան, հազիվ ընկավ նրա գիրկը, երբ հանկարծ դարձավ ինձ, վազեց քովս կայծակի արագությամբ, մինչև ուշքի գալս երկու ձեռներով գրկեց ինձ ամուր ու ջերմ համբուրեց ինձ։ Հետո, առանց մի բառ արտասանելու, նորեն վազեց դեպի նա, բռնեց նրա ձեռները և քաշեց նրան իր հետևից։

Ես երկար ժամանակ կանգնած էի ու նայում էի նրանց հետևից... Վերջապես նրանք չքացան իմ աչքից...

ԱՌԱՎՈՏ

Իմ գիշերները վերջացան առավոտով: Լավ օր չէր: Անձրև էր գալիս, նրա շիթերը տխուր զարնվում էին լուսամուտիս ապակիներին: Մութն էր սենյակս, դուրսը՝ մառախլապատ: Գլուխս ցավում էր ու պտտվում. տենդը սպրդել էր մարմնիս մեջ:

- Տե՛ր, նամակ քո անունով, քաղաքային փոստով, փոստաբերը բերավ,- արտասանեց Մատրյոնան կռնակիցս:

- Նամա՛կ: Ումի՞ց,- գոչեցի ես՝ ոտքի ցատկելով:

- Չգիտեմ, տեր, ինքդ տես, կարելի է նրա մեջ գրված է, թե ումից է...

Ես բաց արի նամակը: Դա նրանից էր:

«Օ՛, ներեցեք, ներեցեք ինձ,- գրում էր ինձ Նաստենկան,- ծնկաչոք աղաչում եմ ձեզ, ներեցեք ինձ: Ես խաբեցի և՛ ձեզ, և՛ ինձ: Դա մի երազ էր, մի տեսիլ... Ես ձեզ համար տառապել եմ այսօր, ներեցեք, ներեցեք ինձ...

Մի՛ մեղադրեք ինձ, որովհետև ես ոչ մի բանում չեմ փոխվել ձեր վերաբերմամբ: Ես ասացի, թե ձեզ սիրելու եմ, ես այժմ էլ սիրում եմ ձեզ, ավելի քան սիրում եմ: Ա՜հ, Աստված: Եթե ես կարողանայի սիրել երկուսիդ էլ: Օ՛, եթե դուք լինեիք նա»:

- Օ, եթե նա լիներ դուք,- թռավ իմ գլխով:- Ես հիշեցի քո խոսքերը, Նաստենկա:

Աստված տեսնում է, թե այժմ ես ինչ կարող էի անել ձեզ համար: Ես գիտեմ, որ ձեզ համար ծանր ու տխուր է: Ես վիրավորել եմ ձեզ, բայց դուք գիտեք՝ երբ սիրում ես, երկա՞ր ես արդյոք հիշում վիրավորանքը: Իսկ դուք ինձ սիրում եք:

Շնորհակալ եմ: Այո՛: Շնորհակալ եմ ձեզնից այդ սիրո փոխարեն: Որովհետև իմ հիշողության մեջ նա տպավորվել է որպես մի անուշ երազ, մի երազ, որ հիշում ես արթնանալուց հետո երկար ժամանակ, որովհետև ես հավիտյան հիշելու եմ այն վայրկյանը, երբ դուք այնպես եղբայրաբար բաց արիք ձեր սիրտը և այնպես վեհանձնաբար նվեր ընդունեցիք իմ սպանված սիրտը, որպեսզի պահպանեք, շոյեք, բժշկեք նրան... Եթե դուք կներեք ինձ, այն ժամանակ հիշատակը ձեր մասին իմ մեջ կվեհանա շնորհակալության հավիտենական զգացմամբ, որ երբեք չի ջնջվի իմ հոգուց... Ես պահպանելու եմ այդ հիշատակը, լինելու եմ նրան հավատարիմ, չեմ դավաճանելու նրան, չեմ դավաճանելու իմ սրտին, որ չափազանց անհողդողդ է: Իմ սիրտը, որ դեռ երեկ այնպես արագ վերադարձավ դեպի նա, որին պատկանում էր հավիտյան:

Մենք կհանդիպենք իրար, դուք կգաք մեզ մոտ, դուք մեզ չեք ձգի, դուք հավիտյան կլինեք իմ բարեկամը, իմ եղբայրը... և երբ դուք ինձ կտեսնեք, ձեր ձեռը կտաք ինձ... այո՞: Դուք կտաք նրան ինձ, դուք ներելեք ինձ, մի՞թե ճիշտ չէ: Դուք ինձ սիրո՞ւմ եք առաջվա պես:

Օ՜, սիրեցեք ինձ, մի՛ ձգեք ինձ, որովհետև ես ձեզ այս րոպեին սիրում եմ, անչափ, որովհետև ես արժանի եմ ձեր սիրուն, որովհետև ես կվաստակեմ ձեր սերը... Իմ սիրելի բարեկամ: Առաջիկա շաբաթ ես ամուսնանում եմ նրա հետ: Նա վերադարձել է սիրահարված, նա երբեք ինձ չի մոռացել... Դուք մի՛ բարկանաք, որ ես գրում եմ նրա մասին: Բայց ես ուզում եմ գալ ձեզ մոտ նրա հետ միասին. դուք նրան էլ կսիրեք, այնպես չէ՞:

Ներեցեք, հիշեցեք և սիրեցեք ինձ, ձեր Նաստենկային»:

Ես կրկին ու կրկին կարդացի այդ նամակը երկարորեն. արցունքը հոսում էր աչքերիցս ուժգին: Վերջապես նամակն ընկավ ձեռներիցս և ես երեսս ծածկեցի:

- Իսկ ես սարդի ոստայնն ամբողջովին վերցրի առաստաղից,- արտասանեց Մատրյոնան, որ կանգնած էր իմ հետևը,- այժմ թեկուզ ամուսնացիր, հյուրեր հրավիրիր, ժամանակն է...

Ես նայեցի Մատրյոնային: Դա տակավին մի առույգ, երիտասարդ պառավ էր, բայց, չգիտեմ ինչու, հանկարծ ինձ երևաց հայացքը մարած, երեսը խորշոմած, մեջքը կռացած, զառամյալ մեկը... Չգիտեմ ինչու, հանկարծ ինձ թվաց, որ իմ սենյակը նույնպես հնացել է, ինչպես պառավը: Պատերն ու հատակը խունացել են, ամեն ինչ աղոտացել է, ոստայնն ավելի է շատացել: Չգիտեմ ինչու, երբ ես նայեցի լուսամուտից դուրս, թվաց ինձ, որ դիմացի տունը նույնպես զառամել ու աղոտացել է, որ նրա սյուների ծեփը ճաքճաքել է ու թափվել, որ կառնիզները սևացել են ու տրաքտրաքել և պատերի մուգ դեղին, պայծառ գույնը գորշ դեղնավուն է դառել:

Մերթ արեգակի ճառագայթը, հանկարծակի նայելով թուխպի հետևից, նորեն թաքնվում է անձրևային ամպի հետևը և դարձյալ ամբողջովին աղոտվում է իմ աչքում, մերթ կարծես իմ առջև այնպես անհրապույր ու տխուր պատկերանում է իմ ապագայի ամբողջ հեռանկարը, և ես ինձ տեսնում եմ այնպես, որպիսին եմ այսօր, ուղիղ տասնհինգ տարի անցած, ծերացած նույն սենյակում, նույնպես մենավոր, նույն Մատրյոնայի հետ, որը մազու չափ չի խելոքացել այսքան տարվա ընթացքում:

Բայց որ ես հիշեմ իմ կրած վիրավորանքը, Նաստեն-

կա, բայց որ խավար ամպ ձգեմ քո պայծառ, անդորր երջանկության վրա, բայց որ, դառը կշտամբելով, թախիծ նետեմ քո սրտի վրա, խոցոտեմ նրան գաղտնի խայթով և ստիպեմ բաբախել տխուր երջանկության րոպեին, բայց որ տրորեմ այն քնքույշ ծաղիկներից գեթ մեկը, որոնց դու հյուսել ես քո սևաթույր գիսակներին, երբ որ դու գնում էիր նրա հետ դեպի պսակադրությանդ սեղանը... Օ՜, ո՛չ, ո՛չ, օ՜, երբե՛ք, երբե՛ք։ Թող պայծառ լինի քո երկինքը, Նաստենկա, թող լուսավոր ու անվրդով լինի քո սիրուն երկինքը, Նաստենկա, թող լուսավոր ու անվրդով լինի քո սիրուն ժպիտը, թող դու լինես օրհնյալ բախտի և երջանկության այն րոպեի փոխարեն, որ դու պարգևեցիր մի ուրիշ, մենավոր, շնորհակալ սրտի։

Աստվա՛ծ իմ։ Երջանկության մի ամբողջ րոպե։ Եվ մի՞թե այդ քիչ է թեկուզ ամբողջ մի մարդկային կյանքի համար...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ 5

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՇԵՐ 22

ՆԱՍՏԵՆԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 43

ԵՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ 58

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ 68

ԱՌԱՎՈՏ 82

թվագրված է 1915-ին Կարսում

ՖՅՈԴՈՐ ԴՈՍՏՈԵՎՍԿԻ

ՍՊԻՏԱԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ФЁДОР ДОСТОЕ́ВСКИ

БЕЛЫЕ НОЧИ

FYODOR DOSTOEVSKY

WHITE NIGHTS

Թարգմանիչ՝ Շիրվանզադե
Խմբագիր՝ Աշոտ Գաբրիելյան
Գեղարվեստական խմբագիր՝ Շահանե Գաբրիելյան

Չափսը՝ 140 x 210 մմ
Տառատեսակը՝ Aktiv Grotesk Armn, չափսը՝ 11.3 pt

«ԴԱՐԱԿ» հրատարակչություն
Երևան, Այվազովսկի 12/7
Հեռ.՝ +374 91 21 73 75

DARAK
հրատարակչություն